Այն ամենն, ինչ անհրաժեշտ է իմանալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության մասին

ՁԵՌՆԱՐԿ

Սեպտեմբեր 2017

Այն ամենն, ինչ անհրաժեշտ է իմանալ
քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության մասին
ՁԵՌՆԱՐԿ

Հեղինակներ՝

Լյուբեն Պանով, Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն (ECNL)

Էսթեր Հարթեյ, Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն (ECNL)

Հերիքնազ Տիգրանյան, Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն (ԹԻՀԿ)

Տաթևիկ Մարգարյան, Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն (ԹԻՀԿ)

Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն
European Center for Not-for-Profit Law
Address: 1052 Budapest, Apáczai Csere János u. 17 (Hungary)
Phone: (+361) 318 6923 / 483 177
E-mail: info@ecnl.org
Website: www.ecnl.org

«Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
Հասցե՝ Երևան 0002, Սարյան 12
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Էլ. փոստ՝ info@transparency.am
Կայքէջ՝ www.transparency.am

Ձեռնարկն ստեղծվել է «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոնի» («ECNL») և Հայաստանի «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի» («Հայաստանի ԹԻՀԿ») կողմից «Պահանջատեր հասարակություն հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

Սույն ձեռնարկը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Ձեռնարկի բովանդակության համար պատասխանատու են ECNL-ը և ԹԻՀԿ-ը, և այն պարտադիր չէ, որ արտացոլի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Բովանդակություն

Ձեռնարկի մասին.....5

- Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հնարավոր օգուտները 6
- Ինչպե՞ս է ձեռնարկատիրական գործունեությունն համադրվում կազմակերպության առաքելությանը 7

Ինչ է ձեռնարկատիրական գործունեությունը 8

- Ինչպե՞ս է սահմանվում ձեռնարկատիրական գործունեությունը 8
- Ինչպե՞ս կարող ենք ոչ առևտրային գործունեությունը տարբերակել ձեռնարկատիրականից 8
- Հասարակական կազմակերպության անդամներին մատուցվող ծառայությունները համարվու՞մ են ձեռնարկատիրական գործունեություն 9
- Ո՞ր օրենքներն են կիրառելի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ՔՀԿ-ների նկատմամբ 9
- Որո՞նք են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հնարավոր ձևերը, և դրանցից որո՞նք են առավել հարմար ՔՀԿ-ներին 9
- Որո՞նք են առանձին առևտրային ընկերություն ստեղծելու դրական և բացասական կողմերը 10

ՔՀԿ-ների ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող իրավական պահանջները . 11

- Որո՞նք են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները..... 11
- Ձեռնարկատիրական գործունեության մասին դրույթ կազմակերպության կանոնադրության մեջ անհրաժե՞շտ է..... 12
- Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունք ստանալու համար պե՞տք է արդյոք կազմակերպությունը պարտավոր լինի վերագրանցվել 12
- Ձեռնարկատիրական գործունեության ի՞նչ տարբերություններ կան հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների միջև, եթե այդպիսիք կան..... 12
- Ինչպե՞ս կարող են ՔՀԿ-ի աշխատակիցները ներգրավվել ձեռնարկատիրական գործունեությանը, կան արդյո՞ք սահմանափակումներ 13
- ՔՀԿ-ի ներսում ո՞վ է պատասխանատու ձեռնարկատիրական գործունեության համար 13
- ՔՀԿ-ի կամավորները կարո՞ղ են ներգրավվել ձեռնարկատիրական գործունեության մեջ 14
- Անհրաժե՞շտ է ունենալ առանձին հաշվապահ և/կամ հաշվապահական հաշվառման համակարգ, ինչպե՞ս պետք է այն գործի..... 14
- Ինչպե՞ս հաշվառել ընդհանուր ծախսերը (այն ծախսերը, որոնք վերագրվում են թե՛ ձեռնարկատիրական, թե՛ շահույթ չհետապնդող գործունեությանը) 14

Ինչպե՞ս կարող ենք տնօրինել ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացվող շահույթը 14

ՔՀԿ-ն կարո՞ղ է շահույթ չհետապնդող գործունեությունից ստացված եկամուտն ուղղել ձեռնարկատիրական գործունեությանը, կամ հակառակը 15

Ձեռնարկատիրական գործունեության տեսակները 15

Ձեռնարկատիրական գործունեության ո՞ր տեսակներն են հարմար ՔՀԿ-ներին՝ ելնելով համեմատելի պրակտիկայից 15

Կա՞ն ոլորտներ կամ գործունեության տեսակներ, որոնցով զբաղվել արգելված է ՔՀԿ-ներին 16

Ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար ընթացակարգային ի՞նչ գործողություններ պետք է կատարի հասարակական կազմակերպությունը 16

ՔՀԿ-ի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը/շահույթը հարկվու՞մ է 16

Որո՞նք են ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ՔՀԿ-ների կողմից առավել հաճախ վճարվող հարկատեսակները 16

Հարկային ռեժիմի տարբերություն կա՞ առևտրային ընկերություն ստեղծելու և ձեռնարկատիրական գործունեությամբ ուղղակիորեն ՔՀԿ-ի միջոցով զբաղվելու միջև .. 17

Հաշվետվությունների և այլ պահանջները 17

ՔՀԿ-ներին անհրաժե՞շտ է հարկային հաշվետվություններ ներկայացնել, և եթե այո, ապա ի՞նչ պահանջներ են կիրառելի 17

ՔՀԿ-ի ղեկավարների պատասխանատվությունը և պատժամիջոցներն իրավական պահանջների խախտման համար 17

Ինչպիսի փաստաթղթեր է տալիս ՔՀԿ-ն տնտեսական գործունեության դիմաց կատարվող վճարումների համար 17

Ի՞նչ է տեղի ունենում ձեռնարկատիրական գործունեության և հարակից գույքի հետ ՔՀԿ-ի լուծարման դեպքում 18

Գործնական խորհուրդներ ձեռնարկատիրական գործունեություն սկսելու վերաբերյալ 18

Հայաստանում և այլ պետություններում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների օրինակներ 22

Ձեռնարկի մասին

Սույն Ձեռնարկի նպատակն է ներկայացնել «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքի ընդունման արդյունքում ի հայտ եկած հնարավորությունների տեսականին, որը հասարակական կազմակերպություններին թույլ է տալիս զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Նպատակն է օգնել հասարակական կազմակերպություններին՝ օգտվելու հնարավոր գործունեության այս նոր դաշտից և ունենալու եկամուտների նոր աղբյուր: Նյութի հիմքում Հայաստանի գործող օրենսդրությունն է, որի մեկնաբանությունը մատուցվում է պարզ և ընկալելի լեզվով: Ներկայացվում են գործնական խորհուրդներ և օրինակներ նմանատիպ ուղի անցած պետությունների փորձից: Թեպետ անդրադարձ է արվում հասարակական կազմակերպություններին՝ Ձեռնարկը կարող է օգտակար լինել շահույթ չհետապնդող այլ իրավաբանական անձանց համար ևս, քանի որ պարունակում է ձեռնարկատիրական գործունեության ընդհանուր շրջանակը և պահանջները՝ համեմված հետաքրքիր գործելակերպի օրինակներով:

Ձեռնարկում ներկայացված են.

- Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու որոշ օգուտները,
- Ձեռնարկատիրական գործունեության բնույթի և դրանով զբաղվելու հնարավոր ձևերի մանրակրկիտ բացատրությունը,
- Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավական պահանջները,
- Ձեռնարկատիրական գործունեության այն տեսակները, որոնցով ՔՀԿ-ները կարող են զբաղվել,
- Ձեռնարկատիրական գործունեության հարկման մասին կանոնները,
- Հաշվետվությունների և այլ պահանջները,
- Ձեռնարկատիրական գործունեություն սկսելու վերաբերյալ գործնական խորհուրդներ,
- Հայաստանում և այլ երկրներում նման գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների օրինակներ:

Ներածություն

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքն (ՀՕ-22-Ն) ուժի մեջ մտավ 2017 թվականի փետրվարի 4-ին՝ պատմության մեջ առաջին անգամ հասարակական կազմակերպություններին թույլատրելով ուղղակիորեն զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Դա բազմաթիվ տարիների քարոզարշավների և քննարկումների արդյունք էր: Հասարակական կազմակերպությունների՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը համահունչ է միջազգային չափանիշներին, որոնց համաձայն ՔՀԿ-ները պետք է ունենան ցանկացած օրինական գործունեությամբ զբաղվելու հնարավորություն: Նոր օրենքի ընդունմամբ նաև վերացվեց տարիներ շարունակ Հայաստանում հասարակական կազմակերպությունների նկատմամբ գոյություն ունեցած խտրական վերաբերմունքը (օրինակ՝ ստեղծագործական միություններն իրավունք ունեին վարձակալել իրենց գույքը և եկամուտ ստանալ): Մինչև 2017 թվականը միայն հիմնադրամներին էր թույլատրված իրենց վերաբերող օրենսդրությանը համապատասխան ուղղակիորեն զբաղվել նման գործունեությամբ:

Այնուամենայնիվ, օրենքով միևնույն է, նախատեսվում են ձեռնարկատիրական գործունեության որոշ սահմանափակումներ: Մասնավորապես, հասարակական կազմակերպություններին արգելվում է կամավորների ներգրավել այդ գործունեությանը: Դա կարող է բացատրվել կառավարության այն մտահոգություններով, որ հասարակական կազմակերպություններին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի ընձեռումը կարող է անարդար մրցակցություն առաջացնել ընկերությունների նկատմամբ: Առաջին քայլը կատարելուց հետո, սակայն, ՔՀԿ-ներն այժմ պիտի կարողանան ի ցույց դնել այս նոր հնարավորության դրական ազդեցությունը յուրաքանչյուր կազմակերպության և ողջ հասարակության վրա:

«Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքի ընդունմամբ այլևս վերացվեցին հասարակական կազմակերպությունների կողմից ուղղակիորեն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավական խոչընդոտները: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտը ողջ աշխարհում եկամտի կարևորագույն աղբյուրներից է ՔՀԿ-ների համար: Ջոնս Հոփկինսի համալսարանի կողմից 2013 թվականի 12 պետություններում կատարված հետազոտությամբ[1] ցույց է տրվել, որ վաճառքից եկամուտը և գույքային եկամուտը (ընդհանուր անվանումը՝ վճարներ կամ ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտներ) կազմում են ՔՀԿ ոլորտի ողջ եկամտի 43%-ը: Դա հաստատում է Ջոնս Հոփկինսի համալսարանի կողմից նախկինում՝ 2004 թվականին 34 պետություններում իրականացված հետազոտության[2] տվյալները, որի համաձայն ծառայությունների դիմաց վճարները եկամտի խոշորագույն աղբյուրն են ՔՀԿ-ների համար:

- **Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հնարավոր օգուտները**

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը բազմաթիվ օգուտներ և դրական արդյունքներ ունի, ներառյալ, օրինակ, հետևյալը.

- Եկամտի անկախ աղբյուր է: Կախված չէ կազմակերպությունը ֆինանսավորելու կամ չֆինանսավորելու մասին մեկ ուրիշի (օրինակ՝ դրամաշնորհների հանձնաժողովի կամ արտաքին գնահատողի) որոշումից:

[1] http://ccss.jhu.edu/wp-content/uploads/downloads/2013/04/JHU_Global-Civil-Society-Volunteering_FINAL_3.2013.pdf
[2] http://ccss.jhu.edu/wp-content/uploads/downloads/2013/02/Comparative-data-Tables_2004_FORMATTED_2.2013.pdf

- Օգնում է կազմակերպություններին՝ հոգալ ծախսեր, որոնք այլ պարագայում պետք է ֆինանսավորվեին նվիրատվություններով կամ դրամաշնորհներով:
- Բազմաթիվ են ծախսերի համաֆինանսավորում կամ կազմակերպության մասնակցություն պահանջող ծրագրերը: Ձեռնարկատիրական գործունեությունը կարող է ֆինանսական այդօրինակ մասնակցությունն ապահովելու միջոց լինել:
- Շահույթը կարող է ուղղվել կազմակերպության համար ֆինանսական պահուստներ ձևավորելուն, որոնք կարող են օգտագործվել ծրագրային ֆինանսավորման ընդհատման կամ ֆինանսական որևէ այլ ռիսկի պարագայում:
- Սոցիալական հիմնախնդիրների լուծման ուղղությամբ կազմակերպության կողմից տարվող աշխատանքներում ամրապնդվում է ձեռնարկատիրական գործելակերպի մշակույթը:
- Օգնում է կազմակերպությանը՝ բացվել նոր և արտաքին շրջանակների՝ հնարավոր շահառուների առջև:
- Օգնում է՝ սոցիալական կարևոր հիմնախնդիրներին գտնել ավելի մնայուն լուծումներ:

- **Ինչպե՞ս է ձեռնարկատիրական գործունեությունն համադրվում կազմակերպության առաքելությանը**

Ոմանք պնդում են, թե ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքում կազմակերպությունը կարող է շեղվել իր հիմնական նպատակից: Մենք, սակայն, կասկածի տակ ենք առնում այդ ընկալումը: Նույնիսկ թե ձեռնարկատիրական գործունեությամբ չզբաղվելու դեպքում կազմակերպությունը կարող է շեղվել իր առաքելությունից: Օրինակ, եղել են դեպքեր, երբ որոշակի խնդրով զբաղվելու համար ստեղծված կազմակերպություն հայտնվել է գործունեության լրիվ այլ դաշտում կամ՝ աստիճանաբար ընդլայնել է ծրագրերի փաթեթը՝ առկա ֆինանսավորման հնարավորությունների հետքով գնալու արդյունքում ընդգրկելով գործունեության բազմաթիվ այլ՝ բուն խնդրին չառնչվող ոլորտներ:

Ձեռնարկատիրական գործունեությունը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից.
- *Որպես գործունեության մեկ տեսակ, որը նպաստում է կազմակերպության առաքելության իրականացմանը*: Օրինակ, եթե կազմակերպության առաքելությունը գիտությանը և հետազոտություններին օժանդակելն է, ապա մասնակցության վճարով գիտական խորհրդաժողով կազմակերպելը Ձեր առաքելությունն իրականացնելուն ուղղված գործունեության ձև է: Այն պարզապես ունի կողմնակի ազդեցություն, այն է՝ լրացուցիչ ֆինանսական միջոցների ստացումը:
- *Որպես եկամտի ևս մեկ աղբյուր:* Այս իմաստով, այն չի տարբերվում դրամահայթայթման այլ աշխատանքներից, օրինակ՝ նվիրատվություններ հավաքելուց, որոնք օգնում են կազմակերպության առաքելությանն առնչվող գործունեության վրա ծախսվելիք միջոցներ հավաքել:

Ձեռնարկատիրական գործունեության բազմաթիվ օրինակներ կան, որոնք կարող են առնչվել կազմակերպության առաքելությանը: Ստորև բերված են իրական փորձից վերցված մի քանի օրինակներ.
1. Հոգեկան հաշմանդամություն ունեցող անձանց օգնող կազմակերպությունն իր շահառուներին ներգրավում է աշխատանքային թերապիայի՝ բանջարեղեն աճեցնելու գործունեության մեջ: Հետագայում բանջարեղենը վաճառվում է, իսկ եկամուտը՝ ուղղվում ծրագրի ծախսերի ֆինանսավորմանը: Միևնույն ժամանակ, հոգեկան հաշմանդամություն ունեցող անձինք գործնական աշխատանքի փորձ են ձեռք բերում:
2. Տարեցների օժանդակող կազմակերպությունը միայնակ ապրող տարեցների համար տնային խնամքի վճարովի ծառայություն է կազմակերպում: Այս կերպ կազմակերպությունն օգնում է օգնության կարիք ունեցող տարեցներին՝ միևնույն ժամանակ նաև ստացված ֆինանսավորումն ուղղելով սոցիալական այլ ծրագրերի

սպասարկման ծախսերի կամ անվճարունակ տարեցներին մատուցվող ծառայությունների ֆինանսավորմանը:

3. Մանկատների շրջանավարտ երիտասարդներին օժանդակող կազմակերպությունը նրանց ներգրավում է օճառի արտադրության մեջ: Դա օգնում է նրանց աշխատանքային հմտությունների ձևավորմանը, ինչպես նաև՝ օճառի վաճառքից եկամուտ բերում կազմակերպությանը:
4. Բնապահպանական կազմակերպությունը բնության հատուկ պահպանվող տարածք է կառավարում: Այնտեղ վճարովի միջոցառումներ է կազմակերպում, որոնց շրջանակում երեխաները մասնակցում են թռչնադիտմանը և այլն: Այդկերպ երեխաներին սովորեցնում են միջավայրի կարևորության մասին, ինչպես նաև՝ ֆինանսավորում հայթայթում բնության հատուկ պահպանվող տարածքում իր բնապահպանական գործունեությունը շարունակելու համար:

Ինչ է ձեռնարկատիրական գործունեությունը

- **Ինչպե՞ս է սահմանվում ձեռնարկատիրական գործունեությունը**

Ընդհանուր սահմանման համաձայն, ձեռնարկատիրական գործունեությունն ապրանքների և ծառայությունների վաճառքն է որոշակի գնով: Սովորաբար կա լրացուցիչ տարր՝ գինը շուկայական է: Այդկերպ դուրս են թողնվում բարեգործական աճուրդ-վաճառքների նման գործարքները, որոնց պարագայում վաճառվող ապրանքի կամ ծառայության արժեքը սովորաբար շատ ավելի ցածր է, քան ստացվող գինը, քանի որ գնորդի կողմից այդ գումարը տալու հիմնական պատճառը դրա՝ բարեգործական նպատակներով ծախսելն է:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության (Քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդված) համաձայն, ձեռնարկատիրական է համարվում «անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»:

- **Ինչպե՞ս կարող ենք ոչ առևտրային գործունեությունը տարբերակել ձեռնարկատիրականից**

Եկամտի որոշ տեսակներ ավանդաբար համարվում են ոչ առևտրային՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող: Դրանցից է նվիրատվությունների, դրամաշնորհների և անդամավճարների ստացումը: Ծառայությունների մատուցման պայմանագրերը (որոնց շրջանակում վճարի դիմաց մատուցում եք ծառայություններ), անգամ եթե ֆինանսավորումը ստացվել է դոնորից, համարվում են ձեռնարկատիրական գործունեություն:

Որոշ նվիրատվությունների կամ անգամ դրամաշնորհների դեպքում ստացողից (շնորհառուից, նվիրառուից) կարող է պահանջվել գումարը ծախսելիս նշել նվիրատուի՝ դոնորի անունը կամ անվանումը: Նման դեպքերում ստացվող արժեքը (շնորհի կամ նվիրատվության գումարը) շատ ավելի մեծ է, քան ստանձնվող պարտավորության (գումարը տրամադրողի անունը կամ անվանումը հիշատակելու պարտավորության) արժեքը: Ակնհայտ է, որ դա ձեռնարկատիրական գործունեություն չէ: Մյուս կողմից, նույն դեպքը (ստացված գումարի դիմաց տրամադրողի անունը կամ անվանումը լուսաբանելը) կարող է նաև գովազդային պայմանագրի վերածվել, որն արդեն կդիտարկվի որպես ձեռնարկատիրական գործունեություն:

Այն փաստը, որ Ձեր ծախսերը գերազանցում են Ձեր եկամուտը, դեռևս չի նշանակում, որ Ձեր գործունեությունը ոչ առևտրային՝ շահույթ չհետապնդող է: Անգամ, եթե որևէ բան վաճառում եք վնասով, դա կարող է համարվել ձեռնարկատիրական գործունեություն, տվյալ պարագայում՝ վնասով իրականացվող ձեռնարկատիրական գործունեություն: Ամփոփելով կարելի է նշել, որ ապրանքի կամ ծառայության ցանկացած վաճառք ավանդաբար համարվում է ձեռնարկատիրական գործունեություն, և միայն բացառիկ դեպքերում (օրինակ՝ նվիրաբերված ապրանքի վաճառքի կամ բարեգործական աճուրդի դեպքում) կարող է վաճառքը համարվել ոչ առևտրային՝ շահույթ չհետապնդող գործունեություն:

- **Հասարակական կազմակերպության անդամներին մատուցվող ծառայությունները համարվու՞մ են ձեռնարկատիրական գործունեություն**

Անդամակցային ցանկացած կազմակերպություն որոշակի իրավունքներ է ընձեռում իր անդամներին: Ուստի, անդամավճարը չի կարող համարվել ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտ: Այնուհանդերձ, եթե անդամակցության իրավունքները (կամ անդամին մատուցվող ծառայությունները) չափազանց սերտորեն են կապակցվում ավելի բարձր վճարներ մուծելու հետ, ապա դա կարող է դիտարկվել որպես հարկերից խուսափում կամ ձեռնարկատիրական գործունեությունը թաքցնելու փորձ: Օրինակ, եթե մարզական միության անդամներն անդամավճար են մուծում միության կողմից շահագործվող մարզասրահից օգտվելու քանակի հիման վրա, ապա դա կարող է համարվել թաքնված ձեռնարկատիրական գործունեություն: Սակայն, եթե բոլոր անդամներն ստանում են որոշակի թվով անվճար այցելություններ մարզասրահ, ապա դա կարող է անդամներին հասանելի սովորական իրավունքների մաս կազմել (եթե նրանք նաև քվեարկելու իրավունք ունեն անդամների ընդհանուր ժողովում):

- **Ո՞ր օրենքներն են կիրառելի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ՔՀԿ-ների նկատմամբ**

«Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքից զատ, գոյություն ունեն մի շարք այլ օրենքներ, որոնք կիրառելի են ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների նկատմամբ՝ ներառյալ հարկային օրենքները, հաշվապահական հաշվառման մասին օրենքը և հաշվետվությունները/վիճակագրությունը կարգավորող օրենսդրությունը: Կախված կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակից՝ կարող են լինել նաև կոնկրետ ոլորտը կարգավորող այլ օրենքներ, որոնց հետ անհրաժեշտ կլինի հաշվի նստել, և եթե կազմակերպությունը ցանկանում է, օրինակ, ծառայություններ մատուցել երեխաների համար, ապա դրա համար կարող է պահանջվել հատուկ լիցենզիա: Ստորև բերված է այլ օրենքների ցանկ, որոնք հնարավոր է նույնպես կիրառելի լինեն:

1. Հարկային օրենսգիրք
2. Մաքսային օրենսգիրք
3. «Լիցենզավորման մասին» օրենք
4. «Պետական տուրքի մասին» օրենք
5. «Հաշվապահական հաշվառման մասին» օրենք
6. «Կանխիկով գործարքների մասին» օրենք (այս օրենքի համաձայն, կանխիկով գործարքները թույլատրված են, սակայն պետք է որոշակի նվազագույն շեմեր լինեն):

- **Որո՞նք են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հնարավոր ձևերը, և դրանցից որո՞նք են առավել հարմար ՔՀԿ-ներին**

Նոր օրենքով թույլատրվում է թե՛ ուղղակի ձեռնարկատիրական գործունեությունը (որն իրականացվում է անմիջականորեն կազմակերպության կողմից՝ կարիք չունենալով ստեղծել առանձին իրավաբանական անձ), թե՛ անուղղակի ձեռնարկատիրական գործունեությունը (ստեղծելով առևտրային ընկերություն կամ լինելով նման ընկերության բաժնետոմսեր):

Ուղղակի ձեռնարկատիրական գործունեության դեպքում կազմակերպությունն ապրանքներ և ծառայություններ է վաճառում իր անունից: Գործունեությունն իրականացնելու պատասխանատվությունը կրում է կազմակերպությունը: Ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնող աշխատակիցները կազմակերպության աշխատակիցներ են: Վերցված ցանկացած վարկ մարում է կազմակերպությունն ինքը: Շահույթը պատկանում է կազմակերպությանը: Այս պարագայում կազմակերպությունը տնտեսում է առանձին իրավաբանական անձ ստեղծելու հետ կապված լրացուցիչ ծախսերը:

Անուղղակի ձեռնարկատիրական գործունեության դեպքում հնարավոր են երկու տարբերակներ.

- Ստեղծել առանձին իրավաբանական անձ, որը 100%-ով պատկանում է հասարակական կազմակերպությանը,
- Բաժնետոմսեր ունենալ ընկերությունում կամ առանձին իրավաբանական անձ ստեղծել գործընկերների հետ (որոնք կարող են լինել կա՛մ այլ հասարակական կազմակերպություններ, կա՛մ ընկերություններ, կա՛մ անգամ ֆիզիկական անձինք):

Հասարակական կազմակերպությունները կարող են ստեղծել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված առևտրային կազմակերպությունների հետևյալ տեսակները կամ մասնակից դառնալ դրանց.

1. Սահմանափակ ընկերակցություն,
2. Ընդհանուր ընկերակցություն,
3. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,
4. Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն,
5. Բաժնետիրական ընկերություն,
6. Կոոպերատիվ:

Այլ գործընկերների հետ համատեղ կազմակերպություն ստեղծելու դեպքում կարևոր է համոզվել, որ հասարակական կազմակերպությունը չունենա անսահմանափակ պատասխանատվություն: Բացի դրանից, կարևոր է, որպեսզի կազմակերպությունը շարունակի որոշակի վերահսկողություն իրականացնել բիզնեսի ռազմավարական ուղղություններին վերաբերող որոշումների նկատմամբ, որպեսզի որոշակի վերահսկողություն ունենա ընկերության կողմից իրականացվող գործունեության նկատմամբ: Դա կարևոր է հատկապես այն պատճառով, որ ընկերությունները հիմնականում հակված են առաջնորդվել շահույթ ստանալու հեռանկարով, և կազմակերպությունը կարող է հայտնվել այնպիսի ընկերության հետ հարաբերություններում, որի իրականացրած գործունեության հետ կազմակերպությունը չի ցանկանա նույնացվել (օրինակ՝ առողջ կենսակերպ խրախուսող կազմակերպությանը պատկանող ընկերության կողմից ծխախոտի/գլանակների վաճառքը):

• Որո՞նք են առանձին առևտրային ընկերություն ստեղծելու դրական և բացասական կողմերը

Ձեռնարկատիրական գործունեությունն առևտրային ընկերության շրջանակում առանձնացնելն ունի որոշ առավելություններ.

- Կազմակերպությունը պատասխանատու կլինի պարտքերի կամ պարտավորությունների համար՝ առևտրային ընկերության կապիտալի մեջ իր բաժնեմասը չգերազանցող չափով,
- Ընկերությունը կկենտրոնանա առևտրային գործունեության և դրանից շահույթ ստանալու ուղղությամբ,
- Դյուրին է հաշվապահական հաշվառումը, քանի որ չի առաջանա եկամուտների և ծախսերի առանձնացման անհրաժեշտություն,
- Ընկերությունը կարող է ավելի մեծ ծավալի ֆինանսավորում հայթայթել՝ ի դեմս բանկային վարկերի կամ հնարավոր ներդրողների:

Այնուհանդերձ, կան նաև որոշ բացասական կողմեր.
- Առանձին ընկերություն ղեկավարելը կարող է լրացուցիչ ծախսեր առաջացնել, Առևտրային գործունեությունը շահույթ չհետապնդող գործունեությանը և կազմակերպության առաքելությանը համապատասխանեցնելը կարող է ավելի դժվար լինել,
- Կարող է բաց թողնվել կազմակերպության ներսում ձեռնարկատիրական մշակույթ ձևավորելու դրական ազդեցությունը:

ՔՀԿ-ները սովորաբար ստեղծում են առանձին առևտրային ընկերություններ, եթե ցանկանում են շահույթ չհետապնդող գործունեությունն հստակորեն տարանջատել ձեռնարկատիրական գործունեությունից: Որոշ դեպքերում կարող են գոյություն ունենալ ՔՀԿ-ի կողմից որոշակի գործունեությամբ ուղղակիորեն զբաղվելու իրավական սահմանափակումներ, ուստի՝ տրամաբանական է դառնում առևտրային ընկերություն ստեղծելու տարբերակը: Երբեմն ներդրումներ (ներառյալ վենչուրային կապիտալ) ներգրավելու անհրաժեշտությունից ելնելով պետք է լինում առանձին առևտրային իրավաբանական անձ ստեղծել, որում հնարավոր ներդրողները կկարողանան բաժնետոմսերի սեփականատեր լինել:

ՔՀԿ-ների ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող իրավական պահանջները

- **Որո՞նք են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները**

«Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 8-րդ հոդվածը կարգավորում է ձեռնարկատիրական գործունեությունը.

1. *Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:*
2. *Կազմակերպությունը վարում է ձեռնարկատիրական գործունեության առանձնացված հաշվառում՝ դրա վերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված հաշվետվություններում:*
3. *Կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթը օգտագործվում է միայն կազմակերպության կանոնադրական նպատակների ուղղությամբ:*

Ամփոփելով կարելի է նշել, որ օրենքը պահանջում է հետևյալը.

- Ձեռնարկատիրական գործունեությունը պետք է համապատասխանի հասարակական կազմակերպության նպատակներին,
- Կազմակերպությունն առանձին-առանձին է վարում ձեռնարկատիրական գործունեության և շահույթ չհետապնդող գործունեության եկամուտները և ծախսերը,
- Ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթը կարող է օգտագործվել միայն կազմակերպության կանոնադրական (ոչ առևտրային, շահույթ չհետապնդող) նպատակների ուղղությամբ:

- **Ձեռնարկատիրական գործունեության մասին դրույթ կազմակերպության կանոնադրության մեջ անհրաժե՞շտ է**

Հասարակական կազմակերպությունն օրենքի պահանջով պարտավոր է իր գործունեության առարկան և նպատակները նշել կանոնադրության մեջ: Դա շատ ընդգրկուն պահանջ է, որը կարող է մեկնաբանվել որպես միայն հիմնական գործունեությունը և շահույթ չհետապնդող նպատակները թվարկելու պահանջ: Այնուհանդերձ, թերևս նպատակահարմար կլինի ձեռնարկատիրական գործունեությունն ուղղակիորեն նշել՝ որպես կազմակերպության գործունեության ձևերից մեկը, ընդ որում՝ չնշելով ձեռնարկատիրական գործունեության կոնկրետ այն տեսակը, որով զբաղվելու է կազմակերպությունը: Եթե կազմակերպությունը ցանկանում է սահմանափակել իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները, այն կարող է առանց խոչընդոտների թվարկել ձեռնարկատիրական գործունեության կոնկրետ տեսակները: Դա, սակայն, կնշանակի, որ կազմակերպությունը պետք է զբաղվի ձեռնարկատիրական գործունեության միայն այն տեսակներով, որոնք նշված կլինեն կանոնադրության մեջ: Ուստի, ձեռնարկատիրական գործունեության տեսակների փոփոխություններն անհրաժեշտ կլինի արտացոլել նաև կանոնադրության մեջ:

- **Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունք ստանալու համար պե՞տք է արդյոք կազմակերպությունը պարտավոր լինի վերագրանցվել**

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել սկսելու համար անհրաժեշտ չէ վերագրանցել կազմակերպությունը: Եթե կազմակերպության կանոնադրությամբ արգելվում է տվյալ գործունեությունը, կամ եթե կազմակերպությունը որոշում է վերանայել և ընդլայնել իր նպատակները և խնդիրները, ապա կարող է ծագել կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն:

- **Ձեռնարկատիրական գործունեության ի՞նչ տարբերություններ կան հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների միջև, եթե այդպիսիք կան**

«Հիմնադրամների մասին» օրենքով[3] հիմնադրամին թույլատրվում է ուղղակիորեն զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, սակայն նախատեսվում է մեկ հստակ սահմանափակում (որը չկա հասարակական կազմակերպությունների պարագայում), այն է՝ գործունեությունը պետք է նշված լինի հիմնադրամի կանոնադրության մեջ: Ուստի, հիմնադրամների իրավակարգավորումը ներկայումս ավելի խիստ է, քան հասարակական կազմակերպություններինը:

[3] «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, http://www.parliament.am/law_docs/310103HO516eng.pdf

Ինչ վերաբերում է բարեգործական կազմակերպություններին, ապա դրանք իրավաբանական անձի առանձին տեսակ չեն: Դրանք գոյություն ունեցող իրավաբանական անձինք են, օրինակ՝ հասարակական միավորումներ, հիմնադրամներ և օրենքով նախատեսված այլ տեսակներ, որոնք ստանում են հատուկ կարգավիճակ և դառնում «բարեգործական»: «Բարեգործության մասին» օրենքով[4] չեն նախատեսվում ձեռնարկատիրական գործունեությանը վերաբերող կոնկրետ դրույթներ, քանի որ այն կարգավորում է ընդամենը բարեգործական գործունեությանն առնչվող առանձնահատկությունները: Ուստի, կիրառելի են ձեռնարկատիրական գործունեության՝ իրավաբանական անձի համապատասխան տեսակին վերաբերող կանոնները: Այնուհանդերձ, բարեգործական կազմակերպությունների մասով կան որոշակի պահանջներ՝ ներառյալ այն դրույթը, որի համաձայն տարվա ընթացքում ստացված եկամտի միայն 20%-ը (բացառությամբ կոնկրետ նպատակի համար արված նվիրատվությունների) կարող է ուղղվել աշխատակիցների վարձատրությանը և վարչական ծախսերին: Ավելին, բարեգործական կազմակերպությունների դեպքում թույլատրելի ծախսեր են բարեգործական ծրագրերի ծախսերը, կամավորների աշխատանքի ծախսերը և կազմակերպական ծախսերը: Վերջին խումբը (կազմակերպական ծախսերը) ներառում է *«բարեգործական ծրագրերի իրականացմանը մասնակցող անձանց աշխատավարձը, բարեգործական կազմակերպությունների նյութատեխնիկական ապահովման եւ գործուղման հետ կապված ծախսերը, բարեգործական կազմակերպությունների գործունեության մասին հաշվետվության եւ տեղեկատվության հրապարակման վրա ծախսված միջոցները»* («Բարեգործության մասին» օրենքի 14-րդ հոդված): Այդ թվարկումից ձեռնարկատիրական գործունեությանն օժանդակող ծախսերի միակ հնարավոր տեսակը կարող են լինել *բարեգործական կազմակերպությունների նյութատեխնիկական ապահովման ծախսերը*:

- **Ինչպե՞ս կարող են ՔՀԿ-ի աշխատակիցները ներգրավվել ձեռնարկատիրական գործունեությանը, կան արդյո՞ք սահմանափակումներ**

Ձեռնարկատիրական գործունեության մեջ աշխատակիցների ներգրավման սահմանափակումներ չկան: Ղեկավարությանն է վերապահված կազմակերպության և դրա աշխատակիցների գործունեությունը կազմակերպելու լիազորությունը:

- **ՔՀԿ-ի ներսում ո՞վ է պատասխանատու ձեռնարկատիրական գործունեության համար**

Օրենքի համաձայն, գործադիր մարմնի իրավասությունները ներառում են «կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը»: Գործադիր մարմինը նաև «գործարքներ է կնքում կազմակերպության անունից», «հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը»: Այս ամենը տեղի է ունենում կազմակերպության բարձրագույն մարմնի ընդհանուր վերահսկողության ներքո, որն էլ օժտված է ցանկացած հարցով որոշում կայացնելու իրավասությամբ:

Բացի դրանից, ձեռնարկատիրական գործունեությունը, ինչպես ցանկացած այլ գործունեություն, ենթակա է վերստուգման վերստուգող մարմնի կողմից, եթե այդպիսին ստեղծվում է: Վերստուգող մարմինն իրավասու է ստուգելու կազմակերպության «ֆինանսատնտեսական գործունեությունը» և «պահանջելու և ստանալու Կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկություններ»:

[4] http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1332&lang=arm&enc=utf8

- **ՔՀԿ-ի կամավորները կարո՞ղ են ներգրավվել ձեռնարկատիրական գործունեության մեջ**

Ոչ: Հասարակական կազմակերպությունների կամավորներին ձեռնարկատիրական գործունեության մեջ ներգրավելն ուղղակիորեն արգելված է:

- **Անհրաժե՞շտ է ունենալ առանձին հաշվապահ և/կամ հաշվապահական հաշվառման համակարգ, ինչպե՞ս պետք է այն գործի**

Օրենքով պահանջվում է առանձին հաշվապահական հաշվառում վարել շահույթ չհետապնդող և ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ: Դա նշանակում է, որ գործունեության երկու ձևերի եկամուտները և ծախսերը պետք է առանձնացնել, որպեսզի ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող յուրաքանչյուր ծախս նվազեցվի ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամտից: Միանման կանոններ են կիրառվում շահույթ չհետապնդող գործունեության նկատմամբ:

Օրինակ, եթե գրքերի վաճառքից (ձեռնարկատիրական գործունեություն) ստանում եք 1,000 դոլարի եկամուտ, և միևնույն ժամանակ պարտավոր եք երեխաների համար կազմակերպել 1,000 դոլար արժեցող սոցիալական ծրագիր (շահույթ չհետապնդող գործունեություն), դա չի նշանակում, թե Ձեր արդյունքը զրո է: Դա նշանակում է, որ 1,000 դոլարի շահույթ ունեք ձեռնարկատիրական գործունեությունից (որի գծով պարտավոր եք վճարել շահութահարկ), իսկ Ձեր շահույթ չհետապնդող գործունեությունն իրականացվում է 1,000 դոլարի վնասով: Հարկը վճարելուց հետո միայն հնարավոր է, կարողանաք տնտեսական գործունեությունից ստացված շահույթն ուղղել շահույթ չհետապնդող գործունեության ծախսերի ֆինանսավորմանը:

- **Ինչպե՞ս հաշվառել ընդհանուր ծախսերը (այն ծախսերը, որոնք վերագրվում են թե՛ ձեռնարկատիրական, թե՛ շահույթ չհետապնդող գործունեությանը)**

Ընդհանուր ծախսերի օրինակ կարող է լինել այն գրասենյակի վարձակալությունը, որտեղ իրականացվում են թե՛ ձեռնարկատիրական, թե՛ շահույթ չհետապնդող գործունեությունը: Կամ՝ գործունեության նշված երկու ձևերին էլ մասնակցող անձի աշխատավարձը: Այդ դեպքերում լավագույն մոտեցումը կարող է լինել այդ ծախսերը որոշակի տրամաբանական մեխանիզմով տարանջատելը, օրինակ՝ համարելով, որ աշխատակիցն իր ժամանակի կեսը ծախսում է ձեռնարկատիրական գործունեության վրա, ուստի՝ նրա աշխատավարձի կեսը հաշվառվում է որպես ձեռնարկատիրական գործունեության կապակցությամբ կատարված ծախս (քանի որ օրենքով պահանջվում է ձեռնարկատիրական և շահույթ չհետապնդող գործունեությունների անջատ հաշվապահական հաշվառում):

Ծախսերն այդ կերպ առանձնացնելու դժվար լինելու պարագայում, թերևս, հնարավոր կլինի օգտագործել որոշակի ընդհանուր չափանիշ, օրինակ՝ փորձել ծախսերի բաժանման համար կիրառել գործունեության երկու ձևերից ստացվող եկամուտների համամասնության գործակիցը (օրինակ, եթե ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտը կազմակերպության ընդհանուր եկամտի 10%-ն է, ապա չբաժանվող ծախսերի գործակիցը նույնպես կլինի 10%):

- **Ինչպե՞ս կարող ենք տնօրինել ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացվող շահույթը**

Կազմակերպությունը պարտավոր է հարկեր վճարել իր շահույթի գծով: Եթե ձեռնարկատիրական գործունեությունն իրականացվել է հասարակական կազմակերպության կողմից ուղղակիորեն, ապա այն ազատորեն կարող է տնօրինել

հարկումից հետո մնացած շահույթը՝ պայմանով, որ այն չբաշխվի անդամների, ղեկավարների միջև և այլն: Այնուամենայնիվ, շահույթը պետք է տնօրինվի միմիայն կազմակերպության՝ կանոնադրության մեջ նկարագրված նպատակների իրագործման համար:

Կազմակերպությունը և նրա ղեկավար մարմինները, սակայն, ազատորեն կարող են որոշել, թե ինչպիսի ծրագրերի մեջ են ներդնելու գումարները: Նրանք կարող են շահույթի հաշվին ֆինանսավորել գոյություն ունեցող ծրագրի ծախսերը կամ նոր սոցիալական ծրագիր մեկնարկել: Նրանք կարող են նաև որոշում կայացնել շահույթի մի մասը որպես կազմակերպության պահուստ տնտեսելու մասին:

- **ՔՀԿ-ն կարո՞ղ է շահույթ չհետապնդող գործունեությունից ստացված եկամուտն ուղղել ձեռնարկատիրական գործունեությանը, կամ հակառակը**

Օրենքի համաձայն, կազմակերպության կանոնադրությունը պետք է որոշակի դրույթներ պարունակի «գույքը տնօրինելու և կառավարելու կարգի» մասին: Չկան որևէ այլ սահմանափակումներ, այսինքն՝ կարող է հնարավոր լինել շահույթ չհետապնդող գործունեությունից ստացված միջոցներն ուղղել ձեռնարկատիրական գործունեությանը, և հակառակը:

ՔՀԿ-ի ձեռնարկատիրական գործունեությունը, սակայն, հիմնվում է մեկ կարևոր սկզբունքի վրա: Ձեռնարկատիրական գործունեությունը պետք է նպատակաուղղված լինի կազմակերպության առաքելությանը սատարելուն: Այսինքն, այն ձեռնարկատիրական գործունեությունը, որի համար կազմակերպության շահույթ չհետապնդող գործունեությունից մշտապես պահանջվում է սուբսիդավորում, հակասում է այդ ձեռնարկատիրական գործունեությունն սկսելու բուն նպատակին: Հետևապես, հասարակական կազմակերպության շահույթ չհետապնդող գործունեությունից ստացող եկամուտների ցանկացած տեղափոխություն կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության մեջ պետք է լինի հասցեական և լավ պլանավորված (օրինակ՝ դա պետք է լինի այնպիսի ներդրում, որից ակնկալվում է ապագա եկամուտ, կամ՝ օգնություն նոր նախաձեռնության մեկնարկի հարցում, որից ապագայում ակնկալվում է հատուցում):

Ձեռնարկատիրական գործունեության տեսակները

- **Ձեռնարկատիրական գործունեության ո՞ր տեսակներն են հարմար ՔՀԿ-ներին՝ ելնելով համեմատելի պրակտիկայից**

ՔՀԿ-ներից շատերն հաճախ դժգոհում են, թե չունեն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար անհրաժեշտ գիտելիք և հմտություններ: Ասում են, թե հմտություններ ունենալու դեպքում կգործեին բիզնեսի հատվածում: Այնուհանդերձ, դա անբավարար հիմնավորում է, քանի որ հմտությունները կարելի է զարգացնել, գիտելիքը՝ ձեռք բերել: Ձեռնարկատիրության համար կարևոր է պատրաստ լինել նոր գաղափարներ/մոտեցումներ փորձարկելուն:

Ներկայումս գնալով ավելի լայն տարածում է գտնում սոցիալական ձեռնարկատիրությունը: Եզրույթը ներառում է երկու տարրեր՝ սոցիալական որևէ հիմնախնդիր (խոցելի խմբերի վրա ազդող հիմնախնդիր կամ հասարակական այլ կարևոր հիմնախնդիր) և բիզնեսի մոտեցում (ծրագրային ֆինանսավորումից կամ նվիրատվություններից զատ, պետք է լինի որոշակի եկամտաբերություն): Թեպետ մարդիկ կարող են կարծել, թե սոցիալական

հիմնախնդիրների նկատմամբ զգայուն գործարարները կարող են ստեղծել լավագույն սոցիալական ձեռնարկությունները, բարեհաջող սոցիալական ձեռնարկատերեր կարող են լինել նաև ՔՀԿ-ների այն ներկայացուցիչները, ովքեր ավելի բաց կլինեն բիզնես մոտեցումների նկատմամբ:

Բազմաթիվ են սեփական բիզնես ստեղծած կամ լրացուցիչ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղված ՔՀԿ-ների օրինակները: Առավել բնորոշ օրինակներից են.

- Կազմակերպության արտադրած հուշանվերների (օրինակ՝ երեխաների պատրաստած փոստային բացիկների) վաճառքը,
- Վճարովի դասընթացներ կազմակերպության առաքելությանն առնչվող թեմաներով,
- Կազմակերպության տարածքի վարձակալություն (օրինակ՝ խորհրդաժողովների սենյակի վարձակալություն այլ կազմակերպությունների հանդիպումների և դասընթացների համար),
- Վճարովի փորձաքննություն կազմակերպության փորձագետների կողմից (օրինակ՝ բնապահպանական փորձաքննություն, իրավական վերլուծություն և այլն),
- Վճարովի սոցիալական ծառայությունների մատուցում (օրինակ՝ աջակցություն միայնակ տարեցներին իրենց տներում),
- Ցերեկային խնամքի կենտրոններ երեխաների համար և այլն:

- **Կա՞ն ոլորտներ կամ գործունեության տեսակներ, որոնցով զբաղվել արգելված է ՔՀԿ-ներին**

Հայաստանի օրենսդրության համաձայն, չկան գործունեության ձևեր, որոնցով զբաղվել արգելված է ՔՀԿ-ներին:

- **Ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար ընթացակարգային ի՞նչ գործողություններ պետք է կատարի հասարակական կազմակերպությունը**

Ուղղակիորեն իրականացվող ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի մասին ազդարարելու անհրաժեշտություն չկա: ՔՀԿ-ն նաև պարտավոր չէ գրանցել բիզնեսի իրականացման հասցեն կամ ստանալ հարկ վճարողի հատուկ համար: Այնուհանդերձ, եթե ՔՀԿ-ն ուղղակիորեն չի զբաղվում ձեռնարկատիրական գործունեությամբ, ապա այն պետք է ընկերություն գրանցի իրավաբանական անձանց պետական ռեգիստրում և հարկային հատուկ համար ստանա դրա համար:

Բացի դրանից, գործունեության համար թույլտվություն ստանալու պահանջ չկա, բացառությամբ երբ գործունեությունը ենթակա է լիցենզավորման:

ՔՀԿ-ների ձեռնարկատիրական գործունեության հարկումը

- **ՔՀԿ-ի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը/շահույթը հարկվու՞մ է**

ՔՀԿ-ի ձեռնարկատիրական գործունեությունն հարկվում է նույն կերպ, ինչ ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունը, ուստի՝ չկան հարկային արտոնություններ:

- **Որո՞նք են ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ՔՀԿ-ների կողմից առավել հաճախ վճարվող հարկատեսակները**

Ստորև ներկայացվում են այն հարկատեսակները, որոնք սովորաբար կիրառվում են ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ: ՔՀԿ-ի կողմից իրականացվող գործունեության կոնկրետ տեսակներից կախված՝ կարող են լինել նաև այլ հարկատեսակներ:

Շահութահարկ. սա ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթի գծով վճարվող հարկն է: Այն հաշվարկվում է դրական ֆինանսական արդյունքի (եկամուտների և ծախսերի դրական տարբերության) նկատմամբ: Դա նշանակում է, որ հարկ չկա, եթե ձեռնարկատիրական գործունեությունը չի բերում շահույթ:

Ավելացված արժեքի հարկ. այս հարկը վճարում են բոլոր վերջնական սպառողները: ՔՀԿ-ները նույնպես վճարում են ԱԱՀ, բացառությամբ երբ նրանք գրանցված են և ԱԱՀ-ն գանձում են իրենց հաճախորդներից/շահառուներից:

- **Հարկային ռեժիմի տարբերություն կա՞ առևտրային ընկերություն ստեղծելու և ձեռնարկատիրական գործունեությամբ ուղղակիորեն ՔՀԿ-ի միջոցով զբաղվելու միջև**

Առանձին առևտրային գործունեություն ստեղծելու կամ ձեռնարկատիրական գործունեությամբ ուղղակիորեն զբաղվելու միջև հարկման առումով չկան տարբերություններ:

Հաշվետվությունների և այլ պահանջները

- **ՔՀԿ-ներին անհրաժե՞շտ է հարկային հաշվետվություններ ներկայացնել, և եթե այո, ապա ի՞նչ պահանջներ են կիրառելի**

Հնարավոր հաշվետվություններից են հարկային մարմիններին ներկայացող կանոնավոր հարկային հաշվետվությունները և գործունեության մասին (ներառյալ վիճակագրական) հաշվետվություններն իրավասու մարմնին՝ Պետական եկամուտների կոմիտեին, ըստ վերջինիս պահանջի:

- **ՔՀԿ-ի ղեկավարների պատասխանատվությունը և պատժամիջոցներն իրավական պահանջների խախտման համար**

ՔՀԿ-ի ղեկավարները պատասխանատու են և կարող են վարչական պատժամիջոցների ենթարկվել հարկային հաշվետվություններ չներկայացնելու համար: Նրանք կարող են քրեական պատժի ենթարկվել հարկերը չվճարելու համար:

- **Ինչպիսի փաստաթղթեր է տալիս ՔՀԿ-ն տնտեսական գործունեության դիմաց կատարվող վճարումների համար**

ՔՀԿ-ները պետք է հաշիվներ դուրս գրեն մատուցված ծառայությունների կամ վաճառված ապրանքների դիմաց բոլոր վճարումների համար: Նրանք իրավասու են վճարումներ ստանալ թե՛ բանկային փոխանցումներով, թե՛ կանխիկով: Կանխիկով վճարումներ ստանալու դեպքում նրանց անհրաժեշտ է ունենալ հաշվիչ-դրամարկղային մեքենա և հաշվառել վերջինս հարկային մարմիններում:

- **Ի՞նչ է տեղի ունենում ձեռնարկատիրական գործունեության և հարակից գույքի հետ ՔՀԿ-ի լուծարման դեպքում**

ՔՀԿ-ի լուծարման դեպքում հիմնադիրները կամ լուծարման մասին որոշում կայացնելու համար լիազորված մարմինը պարտավոր են այդ մասին անհապաղ տեղեկացնել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 68-րդ հոդված): Նրանք նաև պարտավոր են նշանակել լուծարման հանձնաժողով, որին անցնում են կառավարման բոլոր լիազորությունները: Լուծարման հանձնաժողովի հիմնական խնդիրն է հայտնաբերել բոլոր պարտատերերին և բավարարել նրանց պահանջները: Պահանջները բավարարվում են նախ դրամական միջոցների հաշվին, իսկ եթե վերջիններս չեն բավականացնում, ապա լուծարման հանձնաժողովը հրապարակային աճուրդով վաճառում է ՔՀԿ-ի գույքը: Այդ գույքը կարող է ներառել նաև առևտրային ընկերություններում ունեցած բաժնետոմսերը կամ սեփականության իրավունքը (ձեռնարկատիրական գործունեությունն անուղղակիորեն իրականացնելու դեպքում): Դրանք վաճառելու դեպքում գնորդն իրավասու է շարունակել ձեռնարկատիրական գործունեությունը, սակայն դա արդեն չի առնչվի տվյալ ՔՀԿ-ին:

Ձեռնարկատիրական գործունեությունն ուղղակիորեն իրականացնելու դեպքում այն դադարում է լուծարման մասին որոշումը կայացնելուց հետո, և դրա միջոցով կուտակված բոլոր դրամական կամ այլ միջոցները համարվում են ՔՀԿ-ի սեփականությունը՝ ուղղվելով պարտատերերի պահանջների բավարարմանը:

«Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի համաձայն, «*կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե*» («Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մաս): Հաշվի առնելով, որ լուծարումից հետո որոշում կայացնելու իրավունքով օժտված մարմինը կազմակերպության ժողովն է, հենց այդ մարմինն է նաև իրավասու որոշում կայացնել պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացող գույքի օգտագործման հնարավոր ուղիների վերաբերյալ:

Գործնական խորհուրդներ ձեռնարկատիրական գործունեություն սկսելու վերաբերյալ

Այս մասի նպատակն է որոշ ընդհանուր գործիքներ և գաղափարներ ներկայացնել ձեռնարկատիրական գործունեություն սկսել ցանկացող ՔՀԿ-ների համար: Իրականացվելիք քայլերի կամ գործողությունների սպառիչ ցանկի փոխարեն նպատակ է դրված՝ օգնել Ձեզ գտնելու այն հարցի պատասխանը, թե արդյոք ձեռնարկատիրական գործունեությունը նպատակահարմար տարբերակ է Ձեր կազմակերպության համար:

Ա. *Պատրա՞ստ եք սկսել*

ՔՀԿ-ների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հիմնական խնդիրներից մեկն այն տարածված կարծիքն է, թե ՔՀԿ-ները՝ որպես շահույթ չհետապնդող կազմակերպություններ, չպետք է զբաղվեն շահույթ հետապնդող գործունեությամբ: ՔՀԿ-ների աշխատակիցներից կամ առաջնորդներից շատերը կարծում են, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելն հակասում է իրենց առաքելությանը կամ շեղում է մարդկային և այլ ռեսուրսները՝ թույլ չտալով 100 տոկոսով կենտրոնանալ շահույթ չհետապնդող նպատակների ուղղությամբ: Ուստի, առաջին քայլով պետք է **գնահատել, թե**

որքանով է Ձեր կազմակերպությունը պատրաստ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Անհրաժեշտ է մի քանի հարցեր տալ.

- Խորհուրդը պատրա՞ստ է այդ տարբերակին:
- Աշխատակիցները կամ անդամները սատարու՞մ են:
- Ընդհանուր պատկերացում կա՞ առ այն, որ նման գործունեությունը համահունչ կլինի առաքելությանը:

B. *Որո՞նք են Ձեր ուժեղ կողմերը*

Սա բավական նման է «SWOT» վերլուծության, որով անհրաժեշտ է գնահատել Ձեր ուժեղ կողմերը: ՔՀԿ-ները մի շարք առանձնահատուկ առավելություններ ունեն, որոնց մասին երբեմն տեղյակ չեն լինում անգամ իրենք: Անհրաժեշտ է դիտարկել հետևյալը.

- ՔՀԿ-ում աշխատող անձանց, նրանց հմտությունները և գիտելիքը,
- Ձեզ պատկանող կամ Ձեր կողմից տնօրինվող գույքը, օրինակ՝ Ձեր շինությունը կամ վարձակալած գրասենյակը, կուտակած դրամական միջոցները և այլն,
- Ձեր կազմակերպության ունեցած հեղինակությունը,
- Ձեր ունեցած փորձը (իրականացված աշխատանքները, որոշակի թիրախային խմբերի մասին պատկերացումները և այլն),
- Ձեր ունեցած ծանոթությունները, անդամների, կամավորների, շահառուների ցանցերի միջոցով կազմակերպության ունեցած ցանցային կապերը և այլն:

C. *Որո՞նք են կարիքները և շուկայի հնարավորությունները*

ՔՀԿ-ները լավագույնս գիտեն այն անձանց կարիքները, ում խնդիրներով զբաղվում են իրենք: Փորձե՛ք պարզել առկա որոշակի կարիքները: Ի՞նչ խնդիրներ է անհրաժեշտ լուծել: Մարդիկ պատրա՞ստ են վճարել իրենց խնդիրների լուծման գործում օգնության դիմաց:

D. *Ձեր առավելությունները համապատասխանեցրե՛ք կարիքներին և շուկայի հնարավորություններին*

Առկա կարիքներից որո՞նք կարող եք բավարարել Ձեր ունեցած կարողություններով: Հնարավորություն կա՞՝ վաճառելու մի բան, որը պատկանում է Ձեզ կամ կարող է արտադրվել Ձեր կողմից: Կարող եք կազմել բոլոր հնարավորությունների ցանկ, ապա՝ ընտրել ամենամեծ ներուժ ունեցող և Ձեր կազմակերպության բնույթին առավել հարիր գաղափարները:

E. *Պլանավորումը*

Ձեր գաղափարների ընտրությանը պետք է հաջորդի իրական պլանավորումը: Ձեզ անհրաժեշտ է բիզնես-պլան այն մասին, թե ինչպես եք արտադրելու այն, ինչ ցանկանում եք վաճառել, ովքեր են Ձեր հնարավոր հաճախորդները, ինչպես եք հասնելու նրանց, որոնք են Ձեր ծախքերը և ակնկալվող եկամուտները և այլն: Ձեր բիզնես գաղափարի մշակման գործում օգտակար կարող են լինել համացանցային այնպիսի գործիքներ, ինչպիսիք են «Canvas» բիզնես մոդելը[5] և Արժեքային առաջարկի մոդելը:[6]

Բիզնես-պլանի մշակումը պետք է սկսել՝ **որոշելով, թե ինչ եք ցանկանում արտադրել, և ինչ կարիքներ է այն բավարարելու**: Պետք է մտածել, թե ինչու են մարդիկ ուզելու գնել Ձեր արտադրանքը, և թե ինչով է վերջինս տարբերվում շուկայում արդեն իսկ գոյություն ունեցող համանման արտադրանքից: Անհրաժեշտ է հստակորեն մտածել այն մասին, թե ինչ շուկա եք մուտք գործում, ովքեր են Ձեր հնարավոր մրցակիցները, կան արդյո՞ք այլ

[5] https://strategyzer.com/canvas/business-model-canvas
[6] https://strategyzer.com/canvas/value-proposition-canvas

արտադրանքներ, որոնք բավարարում են նույն կարիքը (օրինակ, եթե մարդիկ ծարավ են և Դուք ցանկանում եք ջուր արտադրել, ապա ջուր արտադրող ընկերություններից զատ Ձեզ անհրաժեշտ կլինի դիմագրավել նաև բնական հյութի և գազավորված ըմպելիքների մրցակցությունը):

Բիզնեսի մոդելը երկու բաղադրիչ է ներառում.

- Ինչպես եք արտադրելու այն, ինչ մտադիր եք վաճառել. ովքեր են Ձեր մատակարարները, ովքեր են Ձեր հիմնական գործընկերները, որքան է լինելու Ձեր արտադրանքի ինքնարժեքը:
- Ով է Ձեր հաճախորդը, ինչպես եք հասնելու նրան (հաղորդակցությունը), ինչպես եք առաքելու Ձեր արտադրանքը (կազմակերպչական հարցերը) և որքան գումար կարող եք վաստակել:

F. *Փորձարկե՛ք Ձեր շուկան*

Երբ պարզել եք, թե ովքեր են Ձեր հաճախորդները, և որոշել՝ թե ինչ եք վաճառելու և ինչպես եք այն արտադրելու, <u>հույժ կարևոր է</u> իրականության մեջ փորձարկել Ձեր գաղափարը: Պատրաստե՛ք հարցաշար և այցելե՛ք Ձեր հաճախորդներին՝ պարզելու համար, թե արդյոք Ձեր հիմնական համոզմունքները ճշմարիտ են, թե արդյոք նրանք իրապես պատրաստ են գնել Ձեր արտադրանքը, և թե ինչ գին են նրանք պատրաստ վճարել դրա դիմաց:

Փորձե՛ք գտնել այն անձանց, ովքեր արդեն իսկ զբաղվում են Ձեզ հետաքրքրող գործունեությամբ, որպեսզի պարզեք, թե ինչպես են նրանք աշխատում, ինչն է պայմանավորում նրանց հաջողությունը (կամ փորձե՛ք պարզել, թե ինչ պատճառներով են նրանք ձախողվել): Ցանկացած տեղեկատվությունը, որը կարող եք նախապես հավաքել, Ձեզ կօգնի՝ տնտեսելու գումար և ունենալու հաջողության հասնելու ավելի մեծ շանսեր:

G. *Որոշումներ կայացրե՛ք իրավական և կազմակերպական հարցերով*

Ձեռնարկի նախորդ բաժիններում ներկայացրել ենք ՔՀԿ-ների ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող իրավական և հարկային կարևորագույն հարցադրումների ցանկը: Խորհուրդ ենք տալիս ուշի-ուշով ուսումնասիրել դրանք: Լրացուցիչ հետազոտությունների կարիք կարող է ծագել, եթե Ձեր կողմից վաճառվող արտադրանքի/ծառայությունների համար սահմանված են առանձնահատուկ պահանջներ: Օրինակ, գործունեության որոշ տեսակների համար կարող է պահանջվել լիցենզիա կամ հատուկ թույլտվություն:

Որոշե՛ք՝ ցանկանու՞մ եք առանձին իրավաբանական անձ ստեղծել, թե՞ գործունեությունն սկսելու եք ՔՀԿ-ի շրջանակում: Եթե ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնելու եք ուղղակիորեն, ապա պետք է ունենալ հաշվապահական հաշվառման այնպիսի համակարգ, որում հնարավոր կլինի հսկել ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող եկամուտները և ծախսերը, որպեսզի դրանք առանձնացված լինեն շահույթ չհետապնդող գործունեությունից:

Պարզե՛ք Ձեր խորհրդի կողմից հաստատման ենթակա որոշումների կամ փաստաթղթերի առկայությունը: Գործունեության որոշ տեսակների դեպքում պահանջվում է ներքին ընթացակարգեր կամ ներքին այլ փաստաթղթեր ընդունել: Ձեր կանոնադրության փոփոխություն անհրաժեշտ լինելու դեպքում անպայմանորեն հետևե՛ք կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու համար կազմակերպության սահմանած ընթացակարգերին:

Որոշե՛ք, թե ով է պատասխանատու լինելու ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնելու և մշտադիտարկելու համար: Այդ անձնավորությունը պետք է հետևի, թե

արդյոք Ձեր եկամուտները բավարարում են Ձեր ծախսերը ֆինանսավորելուն, թե արդյոք Ձեր բոլոր հաճախորդները վճարում են իրենց ստացած ծառայությունների/արտադրանքի դիմաց, թե արդյոք Դուք ժամանակին արտադրում եք խոստացվածը, և թե արդյոք Ձեր կարողությունն ի զորու է բավարարել առկա պահանջարկը:

Հ. *Եվս մի քանի գաղափարներ*

ՔՀԿ-ները ոչ միշտ են ունենում անհրաժեշտ բիզնես-հմտությունները: Այնուհանդերձ, նրանք մի շատ կարևոր առավելություն ունեն՝ նրանց առաքելությունը: Դա կարող է օգնել՝ ներգրավելու տարաբնույթ օժանդակողների՝ ներառյալ նաև գործարար հատվածից: Այդօրինակ փորձված անձինք կարող են **խորհրդատուների և կամավորների դեր կատարել Ձեր ձեռնարկատիրական գաղափարը մշակելու և ներդնելու գործում**: Գտե՛ք գործարարների, ովքեր Ձեզ կարող են խորհուրդներ տալ (ելնելով սեփական փորձից) կամ ցուցաբերել որևէ այլ աջակցություն: Դիմե՛ք արդեն իսկ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող այլ ՔՀԿ-ներում աշխատող Ձեր գործընկերներին և հարցրե՛ք, թե ինչ խնդիրների են նրանք առերեսվում, և ինչ խորհուրդներով կարող են Ձեզ օգնել:

ՔՀԿ-ները շատ հաճախ կարծում են, թե որևէ բան վաճառելիս իրենց միակ առավելությունն այն փաստն է, որ իրենք կարող են ավելի էժան արտադրանք արտադրել (օրինակ՝ կամավորների ներգրավելու շնորհիվ կամ ծախսերը ծրագրային ֆինանսավորմամբ համաֆինանսավորել կարողանալու շնորհիվ): Նպատակը, սակայն, պետք է լինի ոչ թե ավելի էժան արտադրանք արտադրելը, այլև՝ **բարձրորակ արտադրանք արտադրելը**, որը նաև հավելյալ արժեք կունենա (կստարի կազմակերպության առաքելությանը): Ավելի էժան գների միջոցով մրցակիցների դեմ պայքարելու նպատակադրումը կարող է խնդրահարույց լինել, քանի որ.

- ՔՀԿ-ները սովորաբար չեն կարող բավականաչափ մեծ քանակ արտադրել, որպեսզի ցածր գնի պայմաններում անգամ մրցունակ լինեն երկարատև հատվածում,
- Մեկ ուրիշը կարող է էլ ավելի ցածր գին առաջարկել՝ Ձեզ դուրս մղելով բիզնեսից,
- Մարդիկ, երբեմն, ցածր գինը մտովի կապակցում են ցածր որակի հետ:

Նախ՝ փորձարկե՛ք, ապա՝ ներդրե՛ք: Եթե հզոր գաղափար ունեք, որը կյանքի կոչելու համար մեծ ֆինանսավորում է պետք, նախ փորձե՛ք տեսնել, թե արդյոք դրա համար գոյություն ունի բավարար շուկա՝ նախքան մեծ ծախսեր կատարելը: Օրինակ, անհրաժե՞շտ է արդյոք ապարատ գնել (որն օգտագործելու եք արտադրության մեջ), թե՞ կարող եք այն սկզբում վարձակալել: Կարո՞ղ եք Ձեր գաղափարը սկսել փուլերով կամ բաժանել ավելի փոքր առանձին մասերի: Այդպիսով, երկրորդ փուլը կսկսեք միայն առաջին փուլի բարեհաջող ավարտի դեպքում: Երբեմն, պարզվում է, որ կազմակերպությունները ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար մեծ ներդրումների կարիք չունեն, քանի որ արդեն իսկ տիրապետում են անհրաժեշտ հմտություններին կամ գույքին:

Պատրաստե՛ք ֆինանսական իրատեսական կանխատեսումներ: Պատրաստե՛ք Ձեր դրամական հոսքերի աղյուսակը և համոզվե՛ք, որ **Ձեր եկամուտը բավարար կլինի ամեն ամիս Ձեր ծախսերը հոգալու համար**: ՔՀԿ-ները լավատեսորեն են վերաբերվում կյանքի տարբեր երևույթներին, որը հաճախ վերածվում է ֆինանսական լավատեսական կանխատեսումների: ՔՀԿ-ների դրամական հոսքերը դիտարկելիս հաճախ կարելի է նկատել, որ ընդամենը մի քանի ամսում եկամուտը կրկնապատկվում կամ անգամ եռապատկվում է: Ֆինանսական հարցերում նախընտրելի է ավելի պահպանողական լինել: Պատրաստ եղե՛ք վաճառքի ցուցանիշի վատթարագույն սցենարին, որպեսզի հետագայում անակնկալի չգաք:

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանում և այլ պետություններում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների օրինակներ

Այս բաժնում ներկայացնում ենք Հայաստանում և այլ պետություններում առևտրային գործունեությամբ զբաղվող ՔՀԿ-ների իրական օրինակներ: Դրանք կարող են ոգեշնչման աղբյուր ծառայել Հայաստանում գործող այն ՔՀԿ-ների համար, որոնք մտածում են ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու մասին: Այս օրինակները նաև ցույց են տալիս ձեռնարկատիրական գործունեության ընձեռած հնարավորությունների լայն շրջանակը, և, թե որքան համատեղելի կարող է այդ գործունեությունը լինել դրանով զբաղվող կազմակերպության առաքելությանը:

Մեդիա նախաձեռնությունների կենտրոն (Հայաստան)

«Մեդիա նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը գործում է Հայաստանում 1995 թվականից7: Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը աջակցում է արտահայտման ազատությանը և ազատ լրատվամիջոցների կայացմանը: Այդ նպատակով ՀԿ-ն կազմակերպում է դասընթացներ կայացած և սկսնակ լրագրողների համար, նպաստում է մեդիա գրագիտության տարածմանը, մասնակցում է մեդիա օրենսդրության բարելավման և լրագրողների իրավունքների պաշտպանության աշխատանքներին: Կազմակերպությունը պատրաստում է մեդիա արտադրանք տարբեր թիրախ խմբերի համար՝ մարդու իրավունքների, եվրոպական ինտեգրացիայի, քաղաքացիական հակամարտությունների, միգրացիայի, ընտրությունների, ազգային փոքրամասնությունների, գենդերային և շատ այլ հարցերի մասին: Կազմակերպությունը Ինտերնյուս ինթերնեշնլ ասոցիացիայի հիմնադիրներից ու անդամներից է:

2004 թ.-ին կազմակերպությունը հիմնեց «Ալտեռա» ձեռնարկությունը, որը **վաճառում է մեդիա արտադրանք և իրականացնում վճարովի մեդիա դասընթացներ**: Ստացած եկամուտը ծառայում է կազմակերպության տարբեր կարիքներին, ներառյալ վարչական և ծրագրային ծախսերը: 2016 թ.-ին ձեռնարկության եկամուտը կազմել է մոտ 25 մլն դրամ (մոտավորապես 52000 ԱՄՆ դոլար), որը կազմակերպության եկամտի մոտ 6% -ն էր:

Ձեռնարկության հիմնական մարտահրավերը կապված է շուկայի ընդլայնման դժվարությունների հետ: Ձեռնարկության աշխատանքները հիմնականում իրականացվում են ՀԿ-ի աշխատակիցների կողմից, որը սահմանափակում է խոշոր նախագծերում ձեռնարկության ընդգրկման հնարավորությունները՝ աշխատակիցների ծանրաբեռնվածության պատճառով: Բացի այդ, ՀԿ-ն մեծ ջանքեր չի գործադրում ձեռնարկության ծառայությունների մարքեթինգի ուղղությամբ և սահմանափակվում է հաճախորդների նեղ շրջանակով: Ձեռնարկության հիմնական հաճախորդները միջազգային կազմակերպություններն ու տեղական ՔՀԿ-ներն են, որոնք իրենց ծրագրերի

[7] Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը «Ինտերնյուս» մամուլի աջակցության հասարակական կազմակերպության նոր անվանումն է:

շրջանակներում դասընթացներ և մեդիա նյութեր են պատվիրում: Կազմակերպության ներկայացուցիչները շեշտում են, որ նախընտրում են աշխատել «ոչ առևտրային մտածելակերպով», որը մի կողմից սահմանափակում է շահութաբերությունն ու շուկայի ծածկույթը, բայց մյուս կողմից էլ «Ալտեռայի» առավելությունն է հանդիսանում, քանի որ դարձնում է այն սոցիալական առաքելությամբ ինքնատիպ ձեռնարկություն:

Մարտունու կանանց համայնքային խորհուրդ (Հայաստան)

2000 թ.-ին ստեղծված Մարտունու կանանց համայնքային խորհուրդը (ՄԿՀԽ) Հայաստանի Գեղարքունիքի մարզի առաջատար հասարակական կազմակերպություններից է: Այն նպատակ ունի նպաստել համայնքներում տնտեսական, սոցիալական և մշակութային խնդիրների արդյունավետ լուծմանը `կարևորելով քաղաքացիների անմիջական ներգրավվածությունը: Կազմակերպությունը հիմնականում գործում է առողջապահության, շրջակա միջավայրի, սոցիալական և համայնքային զարգացման ոլորտներում, տրամադրում է դասընթացներ և աջակցություն այլ տեղական ՔՀԿ-ներին:

2014 թ.-ին ՄԿՀԽ-ն ստեղծեց «Իղձ» ձեռնարկությունը, որը **զբաղվածություն է ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար**: Ձեռնարկության գործարկման սկզբնական միջոցները տրամադրվել են «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է Սեյվ դը չիլդրենի կողմից ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսական աջակցությամբ: Ձեռնարկությունն իրականացնում է կարի արտադրություն (տրիկոտաժե հագուստ, անկողնային պարագաներ, անհատական պատվերներ, ասեղնագործություն) և գունավոր տպագրություն (այցեքարտեր, բուկլետներ, պաստառներ և այլն): Ձեռնարկության առաջնային առաքելությունն է զբաղվածության հնարավորությունների ապահովումը, իսկ ստացած եկամուտը բավարարում է բացառապես ձեռնարկության գործառնական ծախսերի և արտադրության զարգացման ուղղությամբ որոշակի ներդրումների համար: Ձեռնարկության գործունեության մեջ ներգրավված են տասը աշխատողներ, որոնք աշխատում են կես կամ լրիվ դրույքով, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով: 2016 թ.-ին ձեռնարկության եկամուտը կազմել է մոտավորապես 10 մլն դրամ (մոտ 21000 ԱՄՆ դոլար):

Ձեռնարկության հիմնական դժվարությունները ֆինանսական խոչընդոտներն են: Թեև արտադրությունը կազմակերպվում է ՄԿՀԽ-ի տարածքում՝ առանց վարձավճարի ծախսի, ձեռնարկության եկամուտը հազիվ է բավարարում հարկերը, աշխատավարձերը և գործառնական ծախսերը հոգալու համար: Կազմակերպության ներկայացուցիչն ընդգծում է, որ դժվար է գործել բիզնեսի հետ հավասար հարկման սկզբունքներով: Միևնույն ժամանակ, ձեռնարկության արտադրանքը բարձր որակ ունի և կարողանում է մրցակցել շուկայում: Ձեռնարկությունը պատվերներ է ընդունում տարբեր տեղական կազմակերպությունների, պետական կառույցների, կրթական և մշակութային հաստատությունների կողմից: Վաճառքի հետ կապված դժվարություններից մեկը, հատկապես ձեռնարկության շահագործման առաջին շրջանում, մարդկանց բացասական կարծրատիպն էր՝ շատերը հրաժարվում էին հաշմանդամություն ունեցող մարդկանց կողմից արտադրվող հագուստ գնել: Այնուամենայնիվ, այս վերաբերմունք հետզհետե փոխվում է՝ նաև այն պետական պաշտոնյաների և կազմակերպությունների շնորհիվ, որոնք պատրաստակամ են ձեռք բերել «Իղձի» արտադրանքը:

Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա

Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան (ՀԵԿԱ) հիմնադրվել է 2004 թ.՝ սոցիալական փոփոխությունների իրականացման և հայ կանանց համար հավասար հնարավորությունների հասնելու առաքելությամբ: ՀԵԿԱ-ի ռազմավարական նպատակներից մեկը տնտեսական կյանքում կանանց դերի ամրապնդումն է: Այդ նպատակով ՀԵԿԱ-ն նախաձեռնել է մի շարք ծրագրեր, որոնք ուղղված են կանանց գործարար հմտությունների զարգացմանը, կանանց ձեռներեցության ու սոցիալական ձեռնարկատիրության խթանմանը: 2016 թ.-ին ՀԵԿԱ-ն Լոռու մարզի Ախթալա համայնքում հիմնեց սոցիալական ձեռնարկություն՝ «ՆՈՒՌԻԿ» համայնքային և զբոսաշրջության զարգացման կենտրոնը: ՆՈՒՌԻԿ-ի նպատակն է նպաստել Լոռու մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը և աշխատատեղեր ապահովել կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց համար: ՆՈՒՌԻԿ-ը ստեղծվել է «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցության արդյունքում՝ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագրի շրջանակներում: ԱՄՆ ՄԶԳ-ի մի քանի այլ ծրագրեր, ինչպիսիք են օրինակ My Armenia և ARDI, աջակցություն են ցուցաբերել ձեռնարկությանը սարքավորում ստանալու և իր գործունեությունը վարելու համար: ՆՈՒՌԻԿ-ն իրականացնում է **տեղական խոտաբույսերից էկոլոգիապես մաքուր թեյի, փայտյա հուշանվերների, սննդի, լավաշի արտադրություն**: Բացի այդ, 2017թ. ձեռնարկության գործունեության նոր ուղղություններ են ավելացել՝ **գորգագործություն, խեցեգործություն, զբոսավարություն և ուղեկցող տուրեր, ինչպես նաև մշակութային միջոցառումների կազմակերպում**: Քանի որ ՆՈՒՌԻԿ-ի ծառայությունները հիմնականում ուղղված են զբոսաշրջիկներին, կենտրոնը համագործակցում է տուրիստական գործակալությունների հետ՝ զբոսաշրջային խմբերի ներգրավման և Ախթալա բերելու համար:

ՆՈՒՌԻԿ-ի տեղակայման վայրը հատկապես կարևոր է բնապահպանական տեսանկյունից: Ախթալան և հարևան համայնքները տեղակայված են պղնձի վերամշակման գործարանի մոտակայքում, որը տեղական համայնքների եկամտի հիմնական աղբյուր է հանդիսանում: Ձեռնարկատիրական հնարավորություններ առաջարկելով՝ ՆՈՒՌԻԿ-ը ծառայում է որպես կանաչ տնտեսության մոդել և ապահովում եկամտի այլընտրանքային աղբյուր: Ներկայումս ՆՈՒՌԻԿ-ում աշխատում են 10 հոգի, առավելապես կանայք, իսկ ավելի քան 250 տնային տնտեսություններ օգտվում են ՆՈՒՌԻԿ-ի գործունեությունից՝ եկամուտ ստանալով թեյի համար խոտաբույսեր հավաքելու, սննդամթերքի հումքի վաճառքի և ձեռնարկությունում կարճաժամկետ աշխատանքի շնորհիվ: Բացի տեղացի ընտանիքների կենսապահովմանը նպաստելուց, ՆՈՒՌԻԿ-ի եկամուտներն ուղղվում են ձեռնարկության զարգացմանը: 2016 թ.-ին ձեռնարկության եկամուտը կազմել է 5,7 մլն դրամ (մոտ 12000 ԱՄՆ դոլար), որն ուղղվել է ձեռնարկության աշխատակիցների աշխատավարձի, գործառնական ծախսերի և նոր սարքավորումների ծախսերի մի մասը հոգալու համար:

ՀԵԿԱ-ն նախատեսում է ընդլայնել ձեռնարկությունների գործունեությունը հյուրանոցի և ուսումնական կենտրոնի ստեղծման միջոցով, և ներդրումներ է փնտրում նոր ծառայություններ մատուցելու համար: Կազմակերպության հիմնական մարտահրավերները դրամաշնորհներ կամ անտոկոս վարկեր ստանալու դժվարությունն է, քանի որ ձեռնարկությանն առաջարկվում են նույն վարկային պայմանները, ինչ բիզնեսին, իսկ դոնոր կազմակերպությունները հազվադեպ են ձեռնարկության զարգացման համար ֆինանսավորում տրամադրում: ՀԵԿԱ-ի ջանքերի շնորհիվ ՆՈՒՌԻԿ-ին հաջողվել է գտնել իր թեյի արտադրանքի շուկան, սակայն այլ ապրանքների և ծառայությունների համար

անհրաժեշտ են մարքեթինգի մասնագիտական ծառայություններ, ինչը ներկայումս ՀԵԿԱ-ն ի վիճակի չէ ապահովել:

«Bulgarian Center for Not-for-Profit Law» (Բուլղարիա)

«Bulgarian Center for Not-for-Profit Law» (կրճատ՝ «BCNL», բառացի՝ «Բուլղարիայի շահույթ չհետապնդող իրավունքի կենտրոն») հանրօգուտ հիմնադրամ է, որի առաքելությունն է օժանդակել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար նպաստավոր միջավայրի ձևավորմանը Բուլղարիայում: Կազմակերպության նպատակներից է ՔՀԿ-ներին օժանդակելը և նրանց հմտությունների և կարողությունների զարգացմանն աջակցելը:

«BCNL»-ը կազմակերպում է «NGO House» (բառացի՝ «ՀԿ-ների տուն») կենտրոնի գործունեությունը, որը **համատեղ աշխատանքի տարածք է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար:** Կազմակերպությունը որոշել է ստեղծել կենտրոնը՝ ելնելով ՔՀԿ-ների հետ վերջիններիս կարիքների քննարկումներից և Բուլղարիայում ՔՀԿ-ներին նման ծառայություն մատուցողի բացակայությունից: Միևնույն ժամանակ, համատեղ աշխատանքի տարածքները գնալով ավելի մեծ ժողովրդականություն են ձեռք բերում: «BCNL»-ն ուսումնասիրել է առևտրային ընկերությունների համար գործող համանման կենտրոնների փորձը և կազմել սեփական բիզնես-պլանը:

«NGO House»-ն առանձին առևտրային ընկերություն է, որի միակ հիմնադիրը և բաժնետոմսերի 100%-ի սեփականատերը «BCNL»-ն է: Տվյալ բիզնես մոդելի շրջանակում «NGO House»-ը գրասենյակային տարածք է վարձում Սոֆիա քաղաքի կենտրոնում, որը ենթավարձակալության է հանձնում ՔՀԿ-ներին: «NGO House»-ում կան թե՛ առանձին գրասենյակներ, թե՛ համատեղ աշխատանքի տարածք, որից կարող են օգտվել կազմակերպությունները: Ավելին, «NGO House»-ը միջոցառումների տարածքներ է տրամադրում աշխատանքային խմբերի, ժողովների և այլ միջոցառումների համար: Տարածքի վերանորոգման և ձեռնարկության գործունեությունը սկսելու համար պահանջվող սկզբնական ներդրումը կատարվել է «BCNL»-ի սեփական պահուստների հաշվին:

«NGO House»-ի նպատակն է մեկտեղել ՔՀԿ-ներին և ստեղծել հանրույթ: Դա ՔՀԿ-ներին օգնում է համատեղ ծրագրեր մեկնարկել: «BCNL»-ը նաև օժանդակություն և անվճար խորհուրդներ է տրամադրում «NGO House»-ում տեղակայված բոլոր կազմակերպություններին:

«NGO House»-ի բացումը կայացել է 2015 թվականի դեկտեմբերին: Ներկայումս նրա ծառայություններից օգտվում են ավելի քան 15 կազմակերպություններ: Եվս 10-ն արդեն իսկ օգտվել են նրա ծառայություններից բացման օրվանից ի վեր: Կազմակերպությունների թվում կան ՔՀԿ հովանոցային կազմակերպություններ, սոցիալական ոլորտում աշխատող կազմակերպություններ, կամավորականությունը խրախուսող կազմակերպություններ, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններ, բյուրոկրատիայի դեմ պայքարող կազմակերպություններ, առողջ կենսակերպը խթանող կազմակերպություններ և այլք: Կազմակերպությունների միջև նախաձեռնությունների փոխանակման և քննարկման կանոնավոր հնարավորություններ կան: «NGO House»-ը բազմաթիվ համատեղ ծրագրերի է օժանդակել մասնակցող կազմակերպությունների շրջանում: Օրինակ, «NGO House»-ը մաքրման ծառայությունների համար աշխատանքի է ընդունել մտավոր հաշմանդամություն ունեցող երկու անձանց, ովքեր օժանդակություն են ստանում «NGO House»-ի «բնակիչներից» մեկի՝ «Maria's World Foundation» հիմնադրամից:

Ինչ վերաբերում է ֆինանսներին, ապա 2017 թվականի տարեսկզբի դրությամբ գրասենյակների վարձակալությունից ստացող եկամուտը սկսել է բավականացնել «NGO House»-ի կազմակերպման հիմնական ծախսերի մեծ մասի համար՝ բացառությամբ «NGO House»-ի ղեկավարի աշխատավարձի, որը դեռևս հատուցվում է ծրագրային ֆինանսավորման հաշվին: «BCNL»-ը ծախսածածկման կետին (որում եկամուտը բավականացնում է հիմնական ծախսերի համար) հասնելը կարևոր նվաճում է համարում «NGO House»-ի համար:[8]

«Maria's World Foundation» (Բուլղարիա)

«Maria's World Foundation» հիմնադրամը (Բուլղարիա) ստեղծվել է 2012 թվականին: Հիմնադրամի առաքելությունն է բարելավել մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքի անդամների կյանքի որակը և օժանդակել նրանց ինքնահիրացմանը որակյալ ծառայությունների, կրթության և օժանդակող աշխատանքային թերապիայի միջոցով: Հիմնադրամը կազմակերպում է ցերեկային խնամքի կենտրոնի գործունեությունը մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար:

«Maria's World Foundation» հիմնադրամը 2015 թվականին որոշել է սկսել **ֆուրշետային ծառայություններ մատուցել տարբեր հանդիպումների, միջոցառումների և խնջույքների համար**: Դա 2014 թվականին բացված սրճարանի գործունեության տրամաբանական շարունակությունն է, որում մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք մասնակցում են սննդի պատրաստմանը և մատուցմանը: Ձեռնարկատիրական գործունեությունն այդ անձանց աշխատանքային փորձ է տալիս և օգնում ձեռք բերել կյանքի արժեքավոր հմտություններ:

Մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք ակտիվորեն մասնակցում են ֆուրշետային ճաշացանկերի պատրաստմանը և միջոցառումների ընթացքում ֆուրշետների սպասարկմանը: Նրանք գործում են խոհարարի/աշխատանքային թերապիայի մասնագետի հսկողության ներքո: Հիմնադրամը վերապատրաստել է նրանց, որպեսզի կարողանան պատրաստել սննդի և ըմպելիքի նախապես սահմանված որոշակի տեսակների և իրենք էլ մասնակցեն միջոցառումներին: Ներկայումս նրանք կարող են միջոցառումներ կազմակերպել մինչև 50 մասնակցի համար, սակայն ցանկանում են ավելացնել իրենց կարողությունները և ֆուրշետային ծառայություններ մատուցել ավելի մարդաշատ և մեծաթիվ միջոցառումների համար:

Հիմնադրամն այս գործունեությունը սկսել է սեփական ֆինանսական միջոցներով (որոնք ստացվել են տարբեր ծրագրերի շրջանակում): Գումարներն ուղղվել են ավտոմեքենա (սնունդը տեղափոխելու համար) և ֆուրշետային տարբեր պարագաներ (բաժակներ և այլն) գնելուն:

Ֆուրշետային ծառայություններից ստացվող եկամուտը դեռևս բավարար չէ ծախսերը 100 տոկոսով հատուցելու համար: Ուստի, ձեռնարկատիրական գործունեությանն աջակցություն է ցուցաբերվում ծրագրային որոշակի ֆինանսավորման հաշվին կամ պետության կողմից պատվիրակված և հիմնադրամի կողմից մատուցվող սոցիալական ծառայությունների դիմաց ստացվող եկամուտների հաշվին: Մտավոր հաշմանդամություն ունեցող 5-7 անձինք են ներգրավված ձեռնարկատիրական գործունեությանը: Դա շատ լավ վերապատրաստում է նրանց համար: Նրանցից մեկն արդեն իսկ աշխատանքի է անցել շոկոլադի արտադրամասում:

[8] Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս www.ngohouse.bg/en

Մարտահրավերներից մեկը սովորական ընկերությունների կողմից մատուցվող ծառայություններին հավասարազոր կամ ավելի բարձր որակի ծառայություններ մատուցելն է: Նպատակը՝ ունենալ լավ տեսլական և մատուցել համեղ սնունդ: Եթե անգամ գործունեությունը շահութաբեր չլինի, ապա նպատակը կլինի առանց ֆինանսական վնասի աշխատելը:[9]

«Concordia» (Բուլղարիա)

«Concordia»-ն (Բուլղարիա) «Concordia Social Projects» անվանումը կրող միջազգային կազմակերպության մաս է, որը գործունեություն է ծավալում Ռումինիայում, Մոլդովայում և Ավստրիայում: Բուլղարիայում այն սկսել է գործել 2008 թվականից՝ կառավարելով Սբ. Կոնստանտինի անվան սոցիալական և երիտասարդական կենտրոնը, որը ծառայություններ է մատուցում ռիսկի ենթակա երեխաներին և երիտասարդներին: Այն նաև սոցիալական մի քանի այլ ծառայություններ է մշակել նույն թիրախային խմբերի համար:

2010 թվականին «Concordia»-ն **վարսահարդարման սրահ** է բացել: Նպատակն է ներգրավել հիմնադրամի սոցիալական ծառայությունների մեջ ընդգրկված երիտասարդներին, որպեսզի նրանք կարողանան աշխատանքային սովորություններ և աշխատանքի փորձ ձեռք բերել պաշտպանված աշխատանքային միջավայրում: Ձեռնարկատիրական գործունեությունը հիմնադրամի մաս է և իրականացվում է՝ չստեղծելով առանձին իրավաբանական անձ:

Երիտասարդները սկզբնական վերապատրաստում են ստանում: Ցանկություն ունեցողները կարող են աշխատանք գտնել բաց շուկայում: Մյուսները կարող են մնալ և աշխատել «Concordia»-ն վարսահարդարման սրահում:

Ձեռնարկատիրական գործունեությունը ներկայումս ֆինանսավորվում է այդ գործունեությունից ստացվող եկամտի և ծրագրային ֆինանսավորման հաշվին:

Վարսահարդարման սրահի համար մարտահրավեր է այնպիսի վարպետ-վարսահարդար ունենալու դժվարությունը, ով նաև որոշակի մանկավարժական փորձ կունենա: Հաջորդ մարտահրավերն այն փաստն է, որ գործունեությունը շահութաբեր չէ, և հիմնադրամը ստիպված է լինում սատարել այլ եկամուտների հաշվին:[10]

«Global Initiative in Psychiatry» (Բուլղարիա)

«Global Initiative in Psychiatry» (Բուլղարիա) նախաձեռնությունը 2004 թվականին գրանցվել է որպես հիմնադրամ: Այն աշխատում է հոգեկան առողջության համակարգի բարեփոխման և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կյանքը բարելավելու ուղղությամբ:

Հիմնադրամը 2007 թվականին բացել է սոցիալական ձեռնարկություն՝ «**Green**» անվանումը կրող լվացքատունը: Վերջինս մատուցում է անկողնային սպիտակեղենի և սփռոցների լվացքի, չորացման և արդուկման ծառայություններ: Ձեռնարկությունում աշխատում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք: Եկամուտը ստացվում է պետական գնումներից և այլ հաճախորդներից: Ձեռնարկությունը ներկայումս ծառայություններ է մատուցում մի քանի խոշոր կորպորատիվ հաճախորդների, մեկ համալսարանի, մի քանի մանկապարտեզների և այլոց:

[9] Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս http://www.mariasworld.org/en/
[10] Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս http://www.concordia.bg/nachalo/

Ձեռնարկատիրական գործունեությունը կազմակերպվում է առանձին առևտրային ընկերության միջոցով: Սկզբնական ներդրումը կատարվել է ծրագրային ֆինանսավորման հաշվին: Լվացքի մեքենան տրամադրել է հովանավոր ընկերություններից մեկը:

Լվացքատան ծառայությունը վերապատրաստման հնարավորություն է ընձեռում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց, ովքեր հետագայում կարող են աշխատանքի ընդունվել: Ավելին, հիմնադրամը կարող է նրանց օգնել նաև բաց շուկայում աշխատանք գտնելու հարցում: Կազմակերպության մոտ 8 շահառուներ ներկայումս ներգրավված են ձեռնարկատիրական գործունեությանը: 5 անձինք արդեն իսկ աշխատանքի են տեղավորվել ազատ աշխատաշուկայում:

Մարտահրավեր է ծառայության մրցունակ գներ պահպանելը, թեպետ կազմակերպությանն անհրաժեշտ է իր կադրերի վերապատրաստման համար ավելի մեծ ներդրումներ կատարել, քան այլ՝ ավելի փոքր ընկերություններին: Բացի դրանից, ձեռնարկության շուկայի փոքր չափերի պատճառով հնարավոր է լինում ընդունել լվացքատան ծառայությունների միայն ավելի փոքր պատվերներ:

«The Royal Society for the Protection of Birds» («RSPB»)

«The Royal Society for the Protection of Birds» («RSPB», բառացի՝ «Թռչունների պաշտպանության արքայական ընկերակցություն») բարեգործական ոչ կառավարական կազմակերպություն է՝ գրանցված Անգլիայում, Ուելսում և Շոտլանդիայում: Կազմակերպության առաքելությունն է պաշտպանել թռչուններին և նրանց բնական միջավայրը՝ հատկապես վտանգված տեսակներին: «RSPB»-ն ունի ավելի քան 1 միլիոն անդամ, մոտ 1,300 աշխատակից և 13,000 կամավոր. Եվրոպայում այն իր տեսակի մեջ խոշորագույնն է, աշխարհում՝ խոշորագույն կազմակերպություններից մեկը:

«RSPB»-ն առանց խանութ ունի,[11] որում տարատեսակ ապրանքներ են վաճառվում՝ ոչ միայն կապված թռչունների պաշտպանության հետ (օրինակ՝ թռչնի կերեր, բներ, հեռադիտակներ և այլն), այլև՝ կենցաղային օգտագործման տարաբնույթ առարկաներ (տան զարդարման պարագաներ, հագուստ, երեխաների խաղալիքներ կամ պարտեզի խնամքի պարագաներ): «RSPB»-ի առցանց խանութը զուտ եկամտի 90 տոկոսը ծախսում է բնության պահպանության, հանրության կրթության և ջատագովության վրա և՛ Միացյալ Թագավորությունում, և՛ աշխարհի այլ երկրներում:

Կազմակերպության 2016 թվականի ամենամյա հաշվետվության տվյալներով,[12] առևտրային եկամուտը (22.5 միլիոն ֆունտ ստեռլինք, այսինքն՝ մոտ 29 միլիոն ԱՄՆ դոլար) «RSPB»-ի ընդհանուր եկամտի (137.4 միլիոն ֆունտ ստեռլինք, այսինքն՝ մոտ 177 միլիոն ԱՄՆ դոլար) մոտ 1/6-րդ մասն է կազմել: Կազմակերպությունը միայն այս գործունեությունից վաստակել է 2.4 միլիոն ֆունտ ստեռլինգի (մոտ 3 միլիոն ԱՄՆ դոլարի) շահույթ:

Առևտրային գործունեությունից ստացվող եկամտի մեծ մասը բաժին է ընկել փոստային պատվերներին, մանրածախ վաճառքին և ֆուրշետներին: Ի տարբերություն բարեգործական բազմաթիվ կազմակերպությունների, «RSPB»-ն նվիրաբերված ապրանքներ չի վաճառում: «RSPB»-ի վաճառքի ռազմավարության հիմքում ապրանքների որակյալ տեսականու ձևավորումն է, որը կստարի կազմակերպության բարեգործական նպատակներին և համահունչ կլինի ինքնահարատևության և էթիկայի ոլորտում կազմակերպության որդեգրած չափանիշներին:

[11] http://shopping.rspb.org.uk/
[12] https://ww2.rspb.org.uk/globalassets/downloads/documents/aboutthespb/annualreview_20156.pdf

Յուրաքանչյուր անգամ «RSPB»-ի կայքէջից ապրանքներ գնելիս մարդիկ օգնում են թռչուններին և վայրի բնությանը: Բնական աշխարհին սպառնացող գործոնները չափազանց մեծ են, որպեսզի մեկ կազմակերպություն միայնակ կարողանա չեզոքացնել դրանք, սակայն անհատների, համայնքների և անդամների շարունակական օժանդակությամբ «RSPB»-ն կարողացել է հասնել վայրի բնույթանը խիստ անհրաժեշտ շահեկան արդյունքների:

Օրինակ, առցանց խանութից ստացված եկամուտն ուղղվել է Լեյքենհիթ Ֆենի բնական արգելոցի վերականգնմանը, որը նախքան 1995 թվականը հիմնականում գազարի դաշտ էր: Կազմակերպությունը հազարավոր եղեգներ է տնկել՝ ստեղծելով մոտ 200 հեկտարի հասնող ճահճուտների հիանալի միջավայր՝ առատ վայրի բնությամբ: Վայրի բնության տարբեր տեսակներ են վերադառնում այս յուրահատուկ տեղանք՝ ներառյալ ձկնկուլներ, մորուքավոր անգղներ, սոխակներ և դաշտային մկնաճուռակներ: Լեյքենհիթ Ֆենից զատ, «RSPB»-ն մասնակցում է նաև պահպանության տարբեր ծրագրերի, օրինակ՝ ալբատրոսների փրկության ծրագիրը Հարավային Ատլանտիկայում, խոտհարքների վերականգնումը Վիլթշիրում, կամ մնասված ճահիճների վերախոնավացումը Բելառուսում:

«Wielka Orkiestra Świątecznej Pomocy» («WOŚP»)

«Wielka Orkiestra Świątecznej Pomocy» («WOŚP») կազմակերպությունը ոչ կառավարական, շահույթ չհետապնդող, բարեգործական խոշորագույն կազմակերպությունն է Լեհաստանում: «WOŚP»-ի հիմնական նպատակն է փրկել հիվանդների՝ հատկապես երեխաների կյանքը և բարելավել նրանց առողջությունը, ինչպես նաև նպաստել առողջ ապրելակերպի և կանխարգելիչ բուժումների տարածմանը: Կազմակերպությունը բժշկական սարքավորումներ է գնում երկրի տարբեր շրջաններում գտնվող հիվանդանոցների համար և երկրի ողջ տարածքում իրականացնում բժշկական և կրթական ծրագրեր: Ամեն տարի միլիոնավոր քաղաքացիներ գումարներ են հանգանակում նրանց կազմակերպած միջոցառումների համար: Հիմնական միջոցառումը՝ «Մեծ նվագախմբի եզրափակիչը», որը ներառում է տարբեր համերգներ Լեհաստանի գրեթե բոլոր քաղաքներում, երաժիշտների և հայտնի անձանց մասնակցությամբ, ամեն տարի գերազանցում է նախկինում հավաքագրված գումարի ռեկորդային ցուցանիշը:

«WOŚP»-ը «Złoty Melon» անվանումը կրող առանձնացված առևտրային ընկերության բաժնետոմսերի 100 տոկոսի սեփականատերն է: Վերջինս **կազմակերպել է առցանց խանութ, որտեղ տարբեր պարագաներ է վաճառում՝** ներառյալ «WOŚP»-ի տարբերանշանը կրող շապիկներ, սվիտերներ և բաժակներ, ինչպես նաև՝ **առաջին օգնության ցուցաբերման թեմայով դասընթացներ է կազմակերպում և ալբոմներ և գրքեր հրապարակում**: Ընկերությունն օժանդակում է Հիմնադրամի գործունեությանը, օգնում վերջինիս ծախսերի օպտիմալացմանը և լրացուցիչ եկամուտների ստացմանը, որոնք շահութաբաժինների տեսքով փոխանցվում են Հիմնադրամին: «Złoty Melon»-ը նաև ծառայություններ է մատուցում «WOŚP»-ի հովանավորներին և գործընկերներին (օրինակ՝ կազմակերպում է առաջին օգնության ցուցաբերման թեմայով դասընթացներ): Դրանք հիմնականում ընկերություններ են, որի շնորհիվ նրանք կարողանում են կյանքի կոչել Հիմնադրամի խոշորագույն երկու ծրագրերը՝ «WOŚP»-ի եզրափակիչ համերգաշարը (ամենամյա միջոցառում, որը տեղի է ունենում երկրով մեկ, և որին հետևում են համերգներ բոլոր քաղաքներում, ինչպես նաև փողոցային դրամահավաքներ), և Վուդսթոքի փառատոնը: Նշված միջոցառումների հետ կապված եկամուտները «Złoty Melon»-ի տարեկան եկամտի խոշորագույն մասն են, և Հիմնադրամը դրանց հաշվին ծրագրեր է իրականացնում՝ զգալիորեն տնտեսելով Հիմնադրամի ծախսերը:

«Złoty Melon» ընկերությունը մոտ 3.1 միլիոն լեհական զլոտիի (մոտ 818,310 ԱՄՆ դոլարի) շահութաբաժիններ է հանգանակել Նվագախմբին: Դրա շնորհիվ հնարավոր է եղել ընդարձակել «WOŚP»-ի կամավորական ծառայությունների կենտրոնը Սադովո-Մլինում, որտեղ երիտասարդները մասնակցում են առաջին օգնության ցուցաբերման դասընթացների: Դասընթացներն արդեն իսկ ավարտել են 9,000 անձինք:

«Gaspar, Baltasar & Melchior Association» միություն (Ռումինիա)

«Gaspar, Baltasar & Melchior Association» միությունը (Ռումինիա) մշակութային նպատակներ հետապնդող կրթական ՀԿ է, որը հատկապես զբաղվում է մշակութային ժառանգության պահպանությամբ Ռումինիայում: Այն գործում է 2006 թվականից սկսած՝ խեցեգործական նախկին կենտրոնում, Իլֆովում գտնվող Պիսկու գյուղում: Միությունը **երեխաների համար կազմակերպում դասընթացներ է արհեստագործական՝ ներառյալ խեցեգործության, ապակեգործության և նկարչության դասընթացներ**: Դասընթացներից ստացվող եկամուտն ուղղվում է Պիսկուի միակ հիմնական դպրոցին՝ միաժամանակ պահպանելով նաև տեղի մշակութային ավանդույթները:

Պիսկուի դպրոցը հիմնադրվել է «Gaspar, Baltasar & Melchior Association» միության կողմից իրականացված մի քանի ծրագրերի արդյունքում: Այն արհեստագործական դպրոց է, որտեղ կարող են սովորել բոլոր նրանք, ովքեր ցանկանում են ծանոթանալ Ռումինիայի հարուստ մշակութային ժառանգությանը և վերջինիս արժեքներին: Նրանց նպատակն է երիտասարդ սերունդներին առավել իրազեկել մշակութային ժառանգության մասին և առավել սերտորեն կապակցել այդ ժառանգության գեղեցկության և պատմական նշանակության հետ: Միությունը ձգտում է այդ նպատակին հասնել՝ կազմակերպելով դասընթացներ, ամառային դպրոցներ և խորհրդաժողովներ, հրապարակելով մշակութային ժառանգությանը նվիրված գրքեր բոլոր տարիքային խմբերի համար, կազմակերպելով մշակութային ժառանգության գծով մասնագիտացող հիմնական դպրոց, իրականացնելով մարդաբանական հետազոտություններ և կազմակերպելով մշակութային առցանց հարթակի աշխատանքը:

Դասընթացների մասնակիցների թիվն արդեն գերազանցել է 4,000-ը: Բրասովի 17 դպրոցներ արդեն իսկ օգտագործում են մշակութային ժառանգությանը նվիրված նոր ձեռնարկը:[13]

«CliniClowns Foundation» հիմնադրամ (Նիդեռլանդներ)

«CliniClowns Foundation» հիմնադրամը (Նիդեռլանդներ) հասարակական կազմակերպություն է, որը գործում է Նիդեռլանդներում 1993 թվականից ի վեր և հայտնի է առողջապահական հիմարկներում իրականացվող իր հիմնական ծրագրով, որը ներառում է հատուկ պատրաստված ծաղրածուների այցելություններ: Հիմնադրամը յուրաքանչյուր տարի ժամանցային ծրագրեր է կազմակերպում ավելի քան 90,000 հիվանդ և հաշմանդամ երեխաների համար՝ նպատակ հետապնդելով օգնել նրանց կյանքի որակի բարելավմանը: Ժողովրդի մեջ նրանք հայտնի են «ծաղրածու բժիշկներ» անունով: Փորձը ցույց է տվել, որ նրանց այցելություններն հիվանդանոցներ օգնում են խնամառուների տրամադրության բարձրացմանը՝ հույսի և հումորի դրական ներուժով: Այցերն օգտակար են նաև բուժաշխատողների և խնամառուների ընտանիքի անդամների համար:

[13] Դպրոցի և միության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս http://www.scoalaagatonia.piscu.ro/imagini/londra%201/flyer%20agatonia_mare.jpg և https://www.youtube.com/watch?v=C3x-EMnDQJA:

«CliniClowns Foundation» հիմնադրամն ունի **առցանց խանութ, որտեղ յուրաքանչյուր ոք կարող է գնել «CliniClowns»-ի տարբերանշանը կրող ապրանքներ** (օրինակ՝ մանկան հագուստ, խաղալիք, բաժակներ և այլն): Բացի դրանից, կարելի է «CliniClowns»-ի հատուկ ցուցադրությունների տոմսեր ամրագրել, ընդ որում՝ տոմսերի վաճառքից գոյացած եկամուտն ուղղվում է «CliniClowns Foundation» հիմնադրամին:

2016 թվականին դրամահայթայթման տարբեր ձևերից (ներառյալ բնաիրեղեն նվիրատվություններ, հովանավորների նվիրատվություններ, միջոցառումներից ստացված դրամական հասույթ) ստացված եկամուտը կազմել է մոտ 13 միլիոն եվրո (մոտ 15 միլիոն ԱՄՆ դոլար)՝ ներառյալ մոտ 100,000 եվրոյի (մոտ 117,000 ԱՄՆ դոլարի) եկամուտ առցանց խանութի գործունեությունից:[14] Թեպետ առցանց խանութից ստացվող գումարը «CliniClowns»-ի եկամտի հիմնական աղբյուրը չէ, այն ունենում է նաև գովազդային ազդեցություն՝ օգնելով հասարակության շրջանում տեղեկություններ տարածել կազմակերպության մասին՝ յուրաքանչյուր տարի ընդգրկելով ավելի մեծ թվով անձանց: Վաճառքից ստացվող եկամուտն ուղղվում է նոր ծաղրածու-բժիշկներ վերապատրաստելուն, միջոցառումներ (երեխաների համար շոուներ և ցուցադրություններ) կազմակերպելուն և կազմակերպության արդյունքներն ավելի ընդգրկուն դարձնելուն: Առցանց խանութի աշխատանքի և դրամահայթայթման այլ աշխատանքների համակցությամբ իրականություն են դարձվում «CliniClowns» հիմնադրամի նպատակները՝ օգնություն ցուցաբերելով բազմահազար մանուկների:

[14] Ֆինանսական հաշվետվության ամբողջական տարբերակն առկա է (հոլանդերեն) հետևյալ կայքէջում. https://www.cliniclowns.nl/files/Jaarrekening_CliniClowns_2016.pdf